ԳԻՐՔ LVII



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1909 № 10 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵԲՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ. ՊՕԼԻՑ. 7.
1909

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մուրացանի ինքնակենսագրութիւնը 3

Տ. Գրիգոր Է. Անաւարզեցի. Մ. Ա. Օրմանեան . . . 12

Երկու ընկեր
Միայն մի ժպիտ } Բանաստ. Ցար. Պետրոսեան . . . 22

Տանջուածը, Ս. Ռօճճor 23

Գիտութիւն և բարոյականութիւն, Բժ. Բ. Աղասարեան 43

Ժողովրդի մէջ. Ռոզկէրի. Թարգմ or. Ն. Աղանեան . 54

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Հարաման-Ռուզամի. իրաշրջանների վերածուած թուաբանական խնդիրների ժողովածու. Դ. տ. դասընթացք, փոխադրեց Յ. Տէր-Միրաքեան. Or. Ն. Աղանեան . . . 58

ԱՄՍՕՒԱՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Լուրեր 63

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մամուլի տակ է

ԳԻՒՏ տ. Ք. ԱՂԱՆԵԱՆՑԻ

ԳԻՒԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԳԻՐՔ Թ

ՅՈՎՍԷՓ ԱՐՂՈՒԹԵԱՆ

ԳԻՐՔ LVII



ՀԱՅԿ

ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1909 № 10 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵՔՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ. ՊՕԼԻՑ. 7.
1909

ՄՈՒՐԱՑԱՆԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

(Ողղուած պ. Մինաս Բերբերեանին)

Ձեզ ուղարկել էի արդէն աշխատութիւններս, ընդ որս և նամակս, երբ նոյեմբ. 12 թուով Ձեր նամակն ստացայ, որով իմ անձի և աշխատութեանց վերաբերմամբ մի քանի հարցեր էք անում և խնդրում որ շուտով պատասխանեմ։ Դժբաղդաբար մի քանի օրուայ հիւանդութիւնս թոյլ չտուեց աւելի վաղ Ձեր խնդիրը կատարելու։ Այսուամենայնիւ, գրում եմ այժմ մի քանի բան։

Ճշմարիտը խոստովանած, եթէ Ձեր հարցերը չվերաբերէին Ձեր ժողովածուի մէջ իմ անձի մասին անելիք դիտողութեանց, ի հարկէ, ոչ մի դժուարութիւն չէի զգալ Ձեզ պատասխանելու. բայց քանի որ դրանք յիշածս խնդրին են վերաբերում, հարկաւ, ծանր է ինձ ազատօրէն գրել Ձեզ այն ամենը, ինչ որ կարող էիք դուք իմանալ մի երրորդ անձի միջոցով։ Այն միտքը թէ՝ այս կամ այն ծանօթութիւնը տալիս եմ Ձեզ նրա համար՝ որ հրապարակ հանէք, արդէն անախորժ տպաւորութիւն է անում ինձ վրայ։ Ես, առհասարակ, հետամուտ չեմ եղել երբէք երևալու և խոյս եմ տուել միշտ՝ երբ կամեցել են իմ մասին խօսել. և մասամբ էլ հենց այդ թաղչող ընաւորութեանս պէտք է վերագրել այն՝ որ տարիներով առաջ գրած աշխատութիւններս մնացել են անտիպ և տպուածներն՝ առանց վերատպութեան։ Այդ բանին, ի հարկէ քիչ չէ նպաստել և ժամանակիս սղութիւնը, ինչպէս առիթ եմ ունեցել ծեզ գրելու. բայց, ի հարկէ, երևալու ցանկութիւն թէ ունենայի՝ ժամանակ միշտ կարող էի վաստակել։

Այսուամենայնիւ, Ձեր տրած հարցերն ընդունելով իբրև մեր ուղղութեան և բանակին պատկանող անձի մտերմական առաջարկութիւն, մի քանի խօսքով պատասխանում եմ նրան,

ի սրտէ ցանկանալով ծառայել Ձեր այն բարենպատակ ձեռնարկութեան, որպիսին է՝ ռուս հասարակութիւնը ծանօթացնել սակաւուք հայկական գրականութեան հետ։

—Ծնուել եմ 1854 թուականի դեկտեմբեր մէկին. Արցախ նահանգի (Ղարաբաղ) Շուշի քաղաքում։ Ծնողներս միջին դասակարգի մարդիկ էին. հայրս պարապում էր գիւղատնտեսութեամբ, հմուտ էր մի քանի տեսակ արհեստների և «շայիր» կոչուած բանաստեղծների կարգին էր պատկանում. այսինքն յանպատրաստից գիտէր ոտանաւորներ շարադրել և երգել։ Նա մեռաւ, երբ ես ուսանում էի տեղական մասնաւոր դպրոցներից մինում և հազիւ 12 տարեկան էի։ Հօրս մահից յետ մեր ընտանեկան վիճակը վատթարացաւ. ուսսի ստիպուած էին նախկին դպրոցից հանելով՝ աւելի ժամանակին դրպրոց ուղարկել ինձ։ Մի երկու տարուց յետ տուին ինձ Շուշոյ թեմական դպրանոցը, ուր ընդունուեցայ ծրիավարժների թրուում։ Այդ դպրոցը այդ ժամանակ խիստ ծաղկած դրութեան մէջ էր, նա մանաւանդ հայերէնագիտութեան կողմից։ Թեմական դպրոցն աւարտեցի 1873 թիւ յունիսին։ Ապա մի տարի շարունակ պարապեցի ֆրանսերէն ուսանելով, որովհետև այդ առարկան թոյլ էին անցնում մեր դպրոցում։ Ապա երկու տարի հայոց լեզուի և պատմութեան դասատուութիւն արի Խորէն Ստեփանէի Շուշում հիմնած դպրոցում, (որը իւր հեռանալով փակուեցաւ)։ 1877 թուի մեծ մասը գործ դրի իմ հայրենի երկրի զանազան կողմերը շրջելով և Արցախու ու Սիւնեայ աւերակներն ու հին յիշատակարաններն ուսումնասիրելով։ Այս շրջագայութիւնից վերադառնալուց յետ 1877-ի վերջին գրեցի (Շուշիում) իմ առաջին—փոքր ի շատէ ընդարձակ երկս, որ էր՝ Հասան-Ջալալեան ազգի համառօտ տոհմագրութիւնը և այդ ազգի շառաւիղ և ազգանից կաթողիկոսութեան վերջին ժառանգ՝ Բաղդասար Մետրապոլիտ Հասան-Ջալալեանի կենսագրութիւնը, որը և տպուեցաւ «Փորձի» 1880 թուականի չգիտեմ ո՞ր ամսի տետրակում։

Որովհետև նիւթապէս անապահով վիճակ ունէի, ուստի մշտական մի պարապմունք գտնելու յուսով 1878-ի վերջին ե-

կայ Թիֆլիս։ Ցանկանում էի այնպիսի գործով զբաղուել, որը թէ նիւթական դիւրութիւն առաջ լինէր և թէ մտաւոր պարապմունքներս չը խանգարող։ Այդպիսի պարապմունք շատերից վարժապետութիւնն էր ճանաչուած. բայց ես չկամեցայ ուսուցիչ լինել, որովհետև ոչ գլուխ ունէի հոգաբարձուների առաջ խոնարհելու և ոչ լեզու նրանց շողոքորթելու։ Այդ պատճառով աւելի լաւ համարեցի առևտրական ծառայութեան մտնել։ Այս նպատակաւ սովորեցի մի երկու ամսուայ ընթացքում կրկնատոմար հաշուապահութիւն և 1879 թիւ յունուար 2-ին հաշուապահի պաշտօնով մտի տեղական առևտրական տներից մէկը, ուր և ծառայում եմ մինչև այսօր, այն է՝ շուրջ տասն և հինգ տարի։

Ահա՛ այս տարիների ընթացքում սկսայ իմ ազատ ժամերից օգտուել և գրել։ Դժբաղտաբար այդ ազատ ժամերն էլ շատ քիչ էին։ Անցեալները մի դիպուածով (մեր առևտրական տան արխիւը կարգաւորել տալու ժամանակ) կշռեցի այն բոլոր հաշուեդրքերը և թղթերը, որոնք ծայրէ ի ծայր գրուած էին իմ ձեռքով այս 15 տարուայ ընթացքում, և ցաւելով տեսայ՝ որ այդ բոլորի կշիռը հասնում էր մօտ տասն եւ երկու պուդի։ Իսկ եթէ ես նիւթական մի փոքրիկ ապահովութիւն ունեցած լինէի և այդ մեքենայական աշխատութեան փոխարէն գրական աշխատութեամբ պարապէի, քանի՞ հատորներ կունենայի այժմ։ Գիտէ՞ք ինչ մեծ վիշտ է այս ինձ համար։

Բայց ես խնդրից շեղուեցայ։

— Թիֆլիսում գրած առաջին երկս «Ռուզան» պատմական դրամն էր, որի դաղափարը յղացել էի դեռ երկու տարի առաջ՝ Ռուզանի հօր — Հասան-Ջալալի պատմական երկիրը շրջագայած ժամանակ։ 80-ական թուականների հայոց թատրոնի յաջողակ ներկայացումները, որոնց մասնակցում էին Ադամեանի, Մնակեանի, Աստղիկի, Հրաչեայի, Գարագաշի և այլոց նման ոյժերը, և որոնք այնքան հետաքրքրութիւն ու եռանդ էին բորբոքել Թիֆլիսի հայ հասարակութեան մէջ, իմ մէջ էլ եռանդ ներշնչեցին թատերական մի երկ յօրինելու փորձն անել. և ահա՛ այդ փորձից ծնուեցաւ «Ռուզան»ը, որը գրեցի 1881

թուականի դեկտեմբ. ամսում. 82-ի յունուարին յանձնեցի Թատրոնական Մասնաժողովին (մի կողմնակի անձի միջոցաւ, որովհետև ինքս չէի կամենում յայտնուել և անլայտ էլ մնացի մինչև ներկայացման գիշերը)։ Այդ պիեսը խաղացին առաջին անգամ Թիֆլիսում 1882 թիւ փեբր. 4-ին, Աղամեանի, Հրաչեայի և այլոց մասնակցութեամբ։

Այն անսպասելի և չտեսնուած ընդունելութիւնը, որ գտաւ «Ուղանը» Թիֆլիսի հասարակութեան կողմից և որի մասին գրեցին ընդարձակօրէն տեղական Հայ և Ռուս թերթերը—խրախուսեց ինձ դրականապէս նուիրուել գրականութեանը։

Սակայն այդ խրախուսանքը մնաց անպտուղ։ Որովհետև մի քանի փոքրիկ դէպքեր համոզեցին ինձ որ գրականութեան նուիրուելուց առաջ՝ պէտք է ուխտէի քաղցած մնալու։ Բայց որովհետև ինձանից զատ ես մայր էլ ունէի պահելու, ուստի այդ ուխտը չարի, այլ սիրածս զբաղմունքի համար օգտուեցայ միայն հանդստութեանս համար սահմանուած ժամերից։

Եւ այսպէս 1882-ին գրեցի «Հայբողոքականի ընտանիքը», որը տպուեցաւ նոյն Թուականի «Մեղու Հայաստանի» լրագրում և ապա արտատպուեցաւ 1883-ին։ Այս վիպակը բելու շարժառիթը այն կրօնական պայքարն էր, որ մղւում էր այդ ժամանակ «Մեղու» և «Մշակ» լրագիրների մէջ։—Արժրունին որ հայոց պատմութեան և անցեալի տլբուբէնին անտեղեակ էր և չէր ճանաչում այն ժողովուրդը, որի համար լրագիր էր հրատարակում, պնդում էր թէ՝ եթէ հայերի մէջ կրօնական տղանդները բազմանան, ազգութիւնը դրանից չի վտանդուիլ։ Մեղուն, (որին աշխատակցում էր այդ ժամանակ պ. Սպանդարեանը) պնդում էր հակառակը։ Բայց մեր հին և նոր պատմութեան տեղեակ՝ որ հայը չգիտէ թէ՝ կրօնական բաժանումները որքա՞ն թշուառութիւններ են բերել ազգի գլխին, որքա՞ն ընտանիքների մէջ դժտութիւն ու խռովութիւն են սերմանել։ Այդ տեսակ շատ փաստերի հետ ծանօթ էի և ես. և ահա այդ փաստերից մինը իմ վիպակի նիւթը շինեցի—բաժանման կուսակից հրապարակախօսի և նրա համախոհների մոլորութիւնը երևան անելու համար։

Գրեթէ դմանօրինակ մի շարժառիթի ծնունդ է «Իմ կաթոլիկ հարսնացուն»։ Արժրունին մի անգամ իւր առաջնորդողներից մինում ասել էր. «Եթէ մի օր հայ բողոքականները և հայ կաթոլիկները վերադառնան լուսաւորչական եկեղեցւոյ գիրկը, այդ մեզ համար կլինի ոչ թէ բաղդաւորութիւն, այլ անբաղդութիւն. և այդ տեսակ քարոզները շարունակւում էին տարիներով։ «Իմ կաթոլիկ հարսնացուի» մէջ ես կամեցայ ցոյց տալ ընթերցող հասարակութեանը այն *բաղդաւորութիւնը*, որ կարող է ունենալ հայը՝ պապական եկեղեցուն հաւատարիմ մընալով...։ Ես միշտ այն կարծիքին եմ եղել՝ որ վէպերով, աւելի շատ բան կարելի է ասել ժողովրդին, քան սառը առաջնորդողներով, այդ պատճառով, եթէ ուշադրութեամբ դիտէք, կը տեսնէք որ իմ գրուածներում ես միշտ աշխատել եմ մեր մի կարգ հրապարակախօսների անհեթեթ մտքերի և կարծիքների դէմ կռուել։ Որքան է ինձ այդ յաջողել, չգիտեմ, այսքանը միայն կայ՝ որ չեմ մտածել իմ ապագայ փառքի համար. չեմ աշխատել գրուածներս ազատ պահել ժամանակակից ցաւերին վերաբերեալ տենդենցիայից, թէպէտ հաւատացած եմ եղել որ այդ տեսակ գրուածների կեանքը կարճ է լինում։ Ինձ ոգևորել է իմ ժամանակակից եղբայրներին պիտանի լինելու միտքը և ոչ թէ անմահ գրողների շարքը անցնելու տենչանքն։

«Հասարակաց որդեգիրը» ես գրեցի «Ռուզանի» ներկայացումից մի քանի ամիս յետոյ։ Շարժառիթը հետևեալն էր։ Իմ հեղինակութեան ներկայացումը այնքան էր ոգևորել Թիֆլիսի հայ հասարակութիւնը, որ հարուստներից ոմանք ոչ միայն իրենց ծանօթութիւնն ու բարեկամութիւնը ինձ առաջարկեցին, այլ և գեղեցիկ խորհուրդ յղացան՝ նպաստել իմ մաւոր զարգացման՝ ուղարկելով ինձ Եւրոպա թէ՛ ուսանելու և թէ՛ ճանապարհորդելու, որպէսզի այս վերջին միջոցով ծանօթանայի նաև նշանաւոր բեմերի և բեմական տաղանդների հետ։ Աստուծոյ ողորմութեամբ իմ բնական յոռետեսութիւնը ազատեց ինձ հայ ազգասէրների անելիք բարերարութիւնից, որովհետև, ինչպէս վերջը յայտնուեցաւ, ես էլ նոյն վիճակին պիտի հանդիպէի, ինչին որ հանդիպեց իմ խեղճ «հասարակաց որդեգիրը»՝

եթէ անխոհեմութիւն ունեցած լինէի հայերի խոստումներով ոգևորուելու և պաշտօնս թողնելու։

«Իմ երջանկութիւնը»—«Հարուստները զուարճանում են» —«Ի՞նչ լայեղ է» և «Անպատճառ իշխանուհին» ուղղուած են Թիֆլիսի բարձր դասակարգի հայ ընտանեաց՝ դէպի ազգային գործերն ունեցած անտարբերութեան և նրանց մէջ արմատացած մի քանի թերութեանց դէմ։ Վերջին աշխատութեանս (անպատճառ իշխանուհի) ամբողջութիւնը քայքայուած է՝ ցենզուրայից բռնուած մի քանի գլուխների պատճառով։

«Հաս է» վէպով շօշափել եմ մեր պատմական «հասու չհասի» խնդիրը, որը քիչ անգամ չէ ընտանեկան դժբաղդութեանց պատճառ դարձել, նա մանաւանդ, երբ օրէնքը գործ է դրուել աչառու կերպով, այսինքն, հարստի ոսկիները մեղմացրել են այդ օրէնքի խստութիւնը, մինչդեռ աղքատը ճընշուել է նրա ծանրութեան ներքոյ։

«Խորհրդաւոր միանձնուհու» մէջ ես գործելու մի ծրագիր եմ առաջարկում մեր այն երիտասարդներին ու երիտասարդուհիներին, որոնք պարծենում են դէպի հայրենիքն ունեցած իրենց սիրոյ ջերմութեամբ և յաճախ բացադանչում են բանաստեղծի հետ՝

«Ցուէք ինձ սարեր, սարեր կործանեմ,
«Ծառը արմատով գետինէն հանեմ,
«Սուր ակռաներովս երկաթ կծամեմ,
«Մէջս այսքան ոյժ, ասէք, ինչ անեմ...»

Եւ ահա՛ ես այդ մարդկանց առաջարկում եմ իմ ծրագիրը, նրանց յիշեցնում եմ թէ՝ ի՞նչ պէտք է անեն։ «Խորհրդաւոր միանձնուհու» մէջ ես ամուսնական—բանաստեղծական սէրը նուէր եմ բերել Հայրենիքի բարձրագոյն սիրոյն և ինձ թւում է թէ՝ այդ արել եմ ոչ թէ բռնագրօսիկ եղանակաւ, այլ խիստ բնական ճանապարհով։ Մեզ նման մի ընկած ազգը չի կարող ոտքի կանգնել, մինչև որ նրա գործողները ուսուցիչ Գարեգնի և քոյր Աննայի հոգւով վառուած չգործեն։

Ի դէպ, պէտք է ասեմ, որ մի տարի առաջ «Մշակի» և նրա համախոհ թերթերի մէջ փող փչեցին թէ՝ Արծրունին է

առաջին անգամ ամուսնական սէրը Հայրենիքի սիրոյն զոհելու գաղափարը երգել իւր (կարկատած ու մուրացած) Էվելինայի մէջ։ Բայց, ինչպէս տեսնում էք իմ «Խորհրդաւոր միանձնուհին» մի քանի տարի Էվելինայից առաջ է գրուած. ուրեմն այդ գաղափարը ես աւելի վաղ եմ երգել։ Այս կէտի վրայ չէի դարձնիլ Ձեր ուշադրութիւնը, եթէ իւր ժամանակին սրտմտած չը լինէի ցուցամոլ հրապարակախօսի կլաքեօռների դէմ։

Ինչ «Լուսաւորութեան կենտրոնին» է վերաբերում, դա, այսպէս ասած, ժամանակագրական մի վէպ է, որի դեռ առաջին երկու մասերն են հրատարակուած, բայց դրանից էլ կարող էք ենթադրել որ ես այդ երկով կամենում եմ դուրս բերել մեր այժմեան գործողները, լուսաւորութիւնը, զարգացումը և լուծել այն խնդիրը (ի հարկէ ըստ իմ հասկացողութեան) թէ որ ասպիճան իրաւունք ունինք մենք այժմ մեզ լուսաւոր, զարգացած և քաղաքակիրթ անուանելու, կամ թէ, որքան շատ են մեր մէջ նրանք, որոնց սովորենք «ազնիւ գործողներ» անուանելու և նրանցով պարծենալու։

Հարցնում էք թէ ե՞րբ եմ սկսել գրել։—Շատ վաղ, այսինքն աշակերտութեանս ժամանակից։ Դեռ 1872 և 73 թուականներին գրաբառ բանաստեղծութիւններ էի գրում, որոնցից ոմանք տպուած են այդ ժամանակուայ «Արարատ» ամսագրում և «Արշալոյս Արարատեան» օրագրում, ի հարկէ, Գրիգոր Տէր-Յովհաննիսեան ստորագրութեամբ. (Մուրացան կեղծանունս Ռուզանից սկսայ գործածել)։ 1874-ից միայն սկսայ գրել աշխարհաբար բանաստեղծութիւններ—գլխաւորապէս հայրենասիրական և սիրահարական բովանդակութեամբ, որոնք լոյս տեսած չեն ոչ մի տեղ։ 1877-ին գրեցի առաջին արձակ շարադրութիւնս (Հասան-Ջալալեանց ստոմաղրութիւն և Բաղդ. Մեսրաբոլի կենսագրութիւն), որը, ինչպէս ասացի, տպուեցաւ յետոյ «Փորձի» մէջ։ Մնացեալների մասին արդէն գրած եմ նախընթաց նամակում։

Ձեր հարցին թէ՝ ի՞նչ հեղինակներ կամ դէպքեր են ինձ վրայ ազդեցութիւն արել, որոշ պատասխան գրել չեմ կարող։ Աշակերտութեանս ժամանակ միայն ես խիստ տպաւորուող էի և

այդ ժամանակուայ մեր սիրելի գրքերը—բանաստեղծութիւն-ներից՝ Հոմերոսը, Վերգիլիոսը, Միլտոնի դրախտ կորուսեալը և Վիտային էին, իսկ վիպասանութիւններից Ֆէնելոնի Տելեմաքը, Ֆլորիանի Նումա-Պոմպիլիոսը, Բերնարդէն դը Սէն Պիերի՝ Պող և Վերգինէն էն, որոնք, իբրև դեղեցիկ գրաբար թարգմանու-թիւններ տալիս էին մեզ կարդալու և լեզու սովորելու համար։ Դրանց հետ միասին մենք անընդհատ կարդում էինք մեր մա-տենագրութիւնները, գլխաւորապէս Եղիշէն, Խորենացին, Եզ-նիկը էն. նոյնպէս և մեր նախնեաց ոսկեդինիկ թարգմանու-թիւնները։ Սակայն աշակերտութեանս ժամանակ արդէն մի փոքրիկ վիպասանութիւն գրեցի մեր հին դիւցազնական կեան-քից և դա արդիւնք էր կարդացածս թարգմանական վիպասա-նութեանց։ Ցունաց և Հռովմայեցոց հին իմաստասէրների գր-ուածները միայն մտածել են սովորեցրել ինձ։ Ստեղծելու ըն-դունակութիւնս սկսել է զարգանալ դպրոցից ելնելուց յետ, երբ ես արդէն սկսել էի ծանօթանալ եւրոպական նորագոյն գրողների գրուածքների հետ և որոնց, սակայն, կարդում էի ա-ռանց ընտրութեան։ Այդ բանը միայն մի օգուտ տուաւ ինձ. այսինքն, զարգացրեց իմ մէջ կարդացածս գրուածքի վրայ վերին աստիճանի կրիտիքական աչքով նայելու սովորութիւն։ Թիֆլիս գալուց յետ միայն սկսայ ծանօթանալ եւրոպական նշանաւոր կլասիքների հետ—որոնց և անյագաբար կարդում էի։ Ռուսաց յայանի գրողներին աւելի ուշ սկսայ կարդալ։ Որոշ ժամանակից յետ դադարեցի վիպասանութիւններ կարդալուց և այժմ արդէն ինձ գրաւողը հոգեբանական և փիլիսոփայական գրուածներն են։— Այս բոլորից յետ, այսուամենայնիւ, չեմ կարող ասել թէ գրող-ներից ո՞րը ինձ վրայ լաւ կամ վատ տպաւորութիւն է արել, կամ ո՞րին եմ հետևել իմ ստեղծագործութեանց մէջ։ Ամեն մի գործ ստեղծելու ժամանակ իմ աչքի առաջ ունեցել եմ հայ ժո-ղովուրդը, նրա անցեալը, նրա պատմութիւնը, նրա տխուր ներկան. լա՞ւ եմ գրել թէ վատ, նրա համար եմ գրել, նրան եմ կամեցել իմ մտքերն ու զգացմունքներն հաղորդել։ Այդ պատճառաւ եթէ մէկը այսօր իմ գրուածներից կամենայ թարգ-մանել եւրոպական որևէ լեզուով, անօգուտ ծառայութիւն ա-

բած կլինի այդ լեզուին, որովհետև գրածս մեծիայն հայ մարդու համար է եղած, որի ցաւերն զգալու և ճանաչելու համար անգամ հայ պէտք է լինել, ուր մնաց այդ ցաւերի մասին գրուածները կարդալու և հասկանալու համար...։

Հարցնում էք՝ ի՞նչ նպատակ պիտի ունենայ հեղինակը և ի՞նչ նշանակութիւն ունի վէպը։ Այդ հարցին կարող էի պատասխանել այն՝ ինչ որ սովորաբար կպատասխանէր Ձեզ ամեն մի գրող և ինչ որ սովորեցնում են պատասխանել նոյն իսկ աշակերտներին։ Այս պատճառաւ սովորական գարծուածներ չեմ կամենում յեղյեղել։ Բայց ես կցանկանայի որ դուք ինձ հարցնէիք թէ՝ ի՞նչ նպատակ և ծգտում պիտի ունենայ հայ հեղինակը, և ի՞նչ հոգւով պէտք է գրել հայերի համար վէպեր և զրոյցներ։ Զէ՞ որ մենք բաղդաւոր ազգերի թուին չենք պատկանում և բացառիկ բաղդի ու պայմանների մէջ լինելով՝ բացառիկ էլ նպատակ ու ծգտումներ պիտի ունենանք...։ Բայց այս մասին դուք ինձ չէք հարցնում, ես էլ լաւ է որ ուրիշ անգամ խօսեմ Ձեզ հետ, մանաւանդ որ այժմ չափից աւելի երկարեց այս նամակը, որը կարդալու համար էլ դուցէ ծանրոյթ դգաք, մանաւանդ որ խիստ անմաքուր եմ գրել և շատ տեղ չնչոտել եմ։ Այսուամենայնիւ կներէք։

Ընդունեցէք անկեղծ յարգանքներս և սրտագին ողջոյններս։

Խ. Ծառայ Ձեր

ՄՈՒՐԱՑԱՆ

Տ. ԳՐԻԳՈՐ Է. ԱՆԱՒԱՐԶԵՑԻ

143. Ստեփանոս Դ. Հռոմկլայեցին մեռաւ դերութեան մէջ, և քանի որ նա Եգիպտոսի բանտին մէջ կը տառապէր, կաթողիկոս չընտրուեցաւ, և Գրիգոր եպիսկոպոս Անաւարզայ հայրապետական տեղակալութիւն կը վարէր։ Այլ մահուան գործը հասնելուն Գրիգորի փափագին դէմ արգելքը դադրեցաւ, և նա կրցաւ Պրօնագործին և Հռոմկլայեցիին ընտրութեանց օրերէն կազմած նպատակին հասնել, և Հեթում Բ. թագաւորին պաշտպանութեամբ հայրապետական աթոռ բարձրացաւ (1293)։ Հեթում դումարել տուած է եպիսկոպոսաց ժողովը և Գրիգորը ձեռնադրել տուած, Օրբելեանի գրածին համեմատ, որ նորընտիր կաթողիկոսը կ'անուանէ, այր գիտնական և առաքինի, սիրող եկեղեցւոյ, տօնասէր և տօնախմբիչ տօնից տէրունականաց և պայծառացուցիչ յիշատակաց մարտիրոսաց, և կը յաւելու թէ գիտէր և զլեղուս և զղպրութիւնս լատին և յոյն ազգին (Օրբ. Բ. 193)։ Թէպէտ և այդ գովեստներուն մէջ Անաւարզեցիին ուսեալ անձ մը ըլլալէն աւելի բան մը զրուցուած չէ, սակայն միշտ օգտակար է դիտել, թէ Օրբելեան կը գրէր Անաւարզեցիին կենդանութեան ատեն (Օրբ. Բ. 252), և հետևաբար պարտաւոր էր պատշաճից օրէնքը յարգել, թէպէտ իւր պատմութեան ընթացքին մէջ չծածկեր Անաւարզեցիին ուղղութեան դէմ զգացած հակառակութիւնը։ Գրիգոր Է., որ սովորաբար Անաւարզեցի է կոչուած, այդ անունը առած է Անաւարզայ եպիսկոպոս եղած ըլլալէն, և այդ անուան ներքև ընդհանուր գործերու մէջ մեծ դեր վարելէն։ Կոչուած է նաև Մնծքարեցի, առաջուընէ Մեծքարի վանքին առաջնորդ լինելուն համար։ Հեթում կը կոչէ զայն՝ Տէր Գրիգոր Տուտքելիցանց (Հեթ. 85), որոյ ճիշտ իմաստը չենք կրնար ճշտել, թէ պատուոյ կամ թէ պարսաւանաց կոչումէր։ Գրիգոր կոչուած է ևս Երգեցող, երաժշտական յաջողակութեան համար,

Հոռոմ օտարամիտ և օտարասէր լինելուն համար, և Զ.րող՝ բաժակի մէջ ջուր խառնելուն կամ խառնել տալ ուզելուն համար։ Գրիգոր կ'երևի յաջողակ անձ մը, լաւ ձիրքերու տէր, այլ զակատեալ լատինականութեան հանէն։

144. Անաւարզեցիին ժամանակակից քաղաքական իշխաններուն և դիպուածներուն վրայ շատ քիչ տեղեկութիւններ կը գտնենք Օրբելեանի մօտ։ Սա կը յիշէ թէ Լևոն՝ Հեթում Ա-ին արդէն թագաւոր էր իւր ձեռնադրութեան տարին (1286), թէ նա երեք տարի ետքը մեռաւ, և պայազատէ զտէրութիւն նորա երէց որդին Հեթում (1289), զոր և աթոռի վրայ գտնուած կը յիշէ Անաւարզեցիին ընտրութեան տարին (1293), և վերջնոյս առաջին տարիներուն մէջ կ'աւարտէ իւր պատմութիւնը։ Հեթում պատմիչ կը յիշատակէ, թէ Հեթում թագաւոր Հռոմկլայի առումին յաջորդ տարին (1293) թագաւորութիւնը յանձնեց իւր եղբօր Թորոսին, և ինքն եմուտ ի կարգ և կրօնաւորեցաւ և Մակար կոչեցաւ։ Դարձեալ կը գրէ թէ նոյն տարին էառ Հեթում թագաւորն զիւր թագաւորութիւն (Հեթ. 85), սակայն այդ կրօնաւորութեան յիշատակութիւնը կը պակսի Օրբելեանի և Սմբատի մէջ, մինչ Զամչեան կը պատմէ թէ մտաւ ի կարգ Փրանկիսկեանց, կամ Կրտսեր Եղբարց, և կոչեցաւ Եղբայր Յովհաննէս, և թէ երկու տարի մնաց ի կրօնաւորութեան։ Այլ, թէ Հեթում պատմիչին տուած թուականները, և թէ՝ միւս պատմիչներուն լռութիւնը, կը յորդորեն մեզ կարծել, թէ Հեթում թագաւորի կրօնաւորութիւնը վաղանցուկ բան մը եղաւ, որ հետք անգամ չթողուց, և յոյժ կարճատև միջոց մը վանքի մէջ մնալէն ետքը դարձաւ իւր թագաւորութեան։ Կրօնաւորութեան պարագայն ինքն Հեթում թագաւորն ալ չյիշեր իւր ոտանաւորին մէջ, և սակաւօրեայ առանձնութիւն մը եղած պիտի ըլլայ իրեն վանք քաշուիլը։ Այլ թագաւորութեան հոգերէն ազատուելու փափագը մնաց իւր վրայ, և թագաւորութիւնը միւս եղբօր Սմբատին յանձնելով, Թորոս եղբօրը հետ Կոստանդնուպոլիս գնաց (1296 կամ 1297), իւր Ռիթա հօրաքոյրին այցելութեան, որ Անդրոնիկոս Բ. կայսեր որդոյն և գահակիցին Միքայելի կինն էր։ Երկու տարիէն դարձան Հեթում և Թորոս, այլ Սմբատ, թագաւորութիւնը ձեռքէ չհանելու համար, երկուքն ալ ձերբակալել տուաւ և Բարձրբերդի մէջ բանտարկեց, Թորոսը խեղդել տուաւ, Հեթումին աչուընները փնասեց (1299)։ Նոյն տարին Կոստանդին, Լևոնի որդին, իւր եղբօրորդիներուն ըրածներուն վրայ բարկանալով Սմբատը մերժեց, Հեթումը ազատեց, բայց ինքը թագաւորեց։ Այլ յետ սակաւ աւուրց, Հեթում պաշտպանութիւն գտաւ Տաճարական ասպետներէն, Կոստանդինը մերժեց, Սմբատը հեռացուց, և նորէն ինքն

թագաւորեց։ Բայց այս անգամ ալ իշխանական հոգերէն ձանձրացաւ, և յետ աւուրց, իւր հօրեղբօրորդին Լևոնը թագաւորեցուց իւր հսկողութեան ներքև, որ Եգիպտացւոց պատերազմին մէջ (1266) սպանուած Թորոսին զաւակն էր։ Հեթում թագաւորահօրդերը ստանձնեց, չմոռնալով միշտ վանքի առանձնութիւնը, ուր կ'երթար անցնել իւր ժամանակը, երբ կարևոր գործ մը չէր կոչեր զինքն Լևոն թագաւորին մօտ։ Լևոնի թագաւորելը Զամչեան դրած էր 1305-ին, այլ Ալիշան 1301-ին, որ յարմարագոյն է պատմութեան կարգին։ Դարդել չփոթ է այս մասին, զի Թորոսեան Լևոնը, Հեթումեան Լևոնին անմիջական յաջորդ կը դնէ, թէպէտ գիտէ թէ Թորոսեան Լևոնը, որ կոչեցաւ Լևոն Երրորդ, վարեաց զիշխանութիւն հօրեղբօրորդւոյ իւրոյ կոչեցելոյ Հեթում Միականի (Դարդ. 24)։ Գրիգորի մահը տեղի ունեցաւ (1307) Հեթումի և Լևոնի մեռնելէն առաջ, թէպէտև միևնոյն թուականը կը տրուի սովորաբար։

145. Անաւարզեցիին պատմութեան գլխաւոր կէտն է, իւր ջանքն ու փոյթը Հայոց եկեղեցւոյն մէջ օտար սովորութիւններ մուծանելու։ Որովհետև առիթ ունեցանք ըսելու թէ ինքն յաջողակ և գիտնական անձ մըն էր, չենք կարող զինքն մեղադրել իբր օտարի պարզ գործիք մը, կամ իբր արքունական ազդեցութեան տկար հետևող մը։ Միւս կողմանէ կը տեսնենք թէ անխտիր հետամուտ է թէ յոյնէն, թէ լատինէն և թէ ասորիէն սովորութիւններ և ծէսեր և նորութիւններ բերել մեր մէջ, մինչ յիշեալ երեք եկեղեցիներ իրարու հետ սիրով չէին և զիրար կը նզովէին։ Հոռոմ մականունը որ տրուեցաւ Անաւարզեցիին, դժուարին է ճշտել թէ իբր յունասէր կամ թէ իբր լատինասէր պիտի իմանանք, թէպէտ լատինականութեան միտումն էր, որ ժամանակին աւելի աչքի կը զարնէր։ Անաւարզեցին շատոնց այդ տենչանքով բորբոքուած էր, և երբ յաջողեցաւ կաթողիկոսութիւնը ձեռք ձգել, ազատաբար ձեռնարկեց իւր նպատակն իրականացնել, բայց կատարելապէս չյաջողեցաւ։ Անաւարզեցիին նորութիւնները եղած են. 1. Բաժակին ջուր խառնել և պատարագամատոյցին ինչ ինչ յաւելուածներ ընել։ 2. Սուրբ աստուած՝ էն Որ խաչեցար՝ը վերցնել։ 3. Քրիստոսի և սրբոց տօնները ամսաթուով կատարել։ 4. Մեծ տօներուն միօրեայ ծոմ կատարել լատինական հսկման նախատօներու նման։ 5. Մկրտութեան, դրոշմի և ձեռնադրութեան մաշտոցներու մէջ փոփոխութիւններ մուծանել։ 6. Ձեռնադրութիւնները տարուոյն չորս եղանակաց պահոց օրերը կատարել ըստ Լատինաց։ 7. Ժամերգութեան մէջ յաւելուածներ մտցնել օտարաց հետևողութեամբ։ 8. Երեխայից իւղ գործածել։ 9. Հիւանդաց վերջին խորհուրդը օծմամբ կատարել։ Գրիգոր այդ փա-

փագները չէր ծածկեր, և քանի որ չէր կրնար բացարձակապէս հրամայել, ինքն առանձինն սկսած էր գործածել, ինչպէս բաժակի ջուրին համար կը պատմուի։ Միւս կողմէն եկեղեցական տօներու համար բազմաթիւ նոր շարականներ կը պատրաստէր, նոր տօնացոյց կը յօրինէր, յայսմաւուրքի կարգերը կը փոխէր, և յիշատակները կը ճոխացնէր։ Անաւարզեցիին շարականներէն երեսունուվեցք հատը կը ցուցակագրէ Ալիշան, որք երևի թէ մեծ արժէք չունին, եթէ ամենն ալ կը նմանին Ս. Գէորգի շարականին, որ տպագրուած է ձեռաց շարակնոցի մը վերջը։ Անաւարզեցւոյն նորութիւններէն միակը, որ ընդունելութիւն գտած և մեզի հասած է, Մեծացուսցէ փոխին ու շարականին հանապազօր զրուցուելն է, որ ըստ Օձնեցւոյն կիրակնօրեայ իւղարերից կարգ'ին մասը կը կազմէ։

146. Անաւարզեցիին առաջարկած նորութիւններուն շշնչիւնը հասաւ Արևելք, ուր կանուխէն նորա անունը կասկածելի եղած էր, և կրցածնուն չափ աշխատած էին որ կաթողիկոսական աթոռը չբարձրանայ։ Արևելցիք սոսկալով լսեցին թէ Անաւարզեցին սկսաւ առ սակաւ սակաւ զամենայն աւանդութիւնս Հոռոմոց եկեղեցւոյն սպրդեալ մուծանել ի մերս եկեղեցի, և ի մերոց ի բաց քեցել մի մի, և թէ նամակ հաւանութեան առաքէր առ պատրիարքն ի Կոստանդնուպօլիս և խոստանայր յանձն առնուլ զոր ինչ և խնդրեսցեն (Օրբ. Բ. 195)։ Օրբէլեան, որ նոյն ատեն Սիւնեաց արքեպիսկոպոս էր և Արևելեան վարդապետներուն պետը, աղեցաւ և լերդախոց ողբերով կը նկարագրէ այդ միջադէպը, և կը յիշէ թէ Անաւարզեցիին կողմանէ յառաջ բերուած փաստն այն էր, թէ տկար լինելնուս համար պէտք է Հոռոմները և ամէն ազգերը մեզի հետ միացնել, և թէ միութիւն ընելով Անտիոքի հայրապետական աթոռը պիտի գրաւենք։ Բայց Արևելեայք այդ սեթևեթներով չէին խաբուիր։ Ժողով մը գումարուեցաւ ի Սիւնիս, Օրբելեան Ստեփանոս արքեպիսկոպոսի նախագահութեամբ, և Բջնոյ, Հաղբատու, Հաւուցթառայ և Գողթան եպիսկոպոսներուն, և Տաթևու և Նորավանից և ուրիշ վանահայրներու և վարդապետներու, և Օրբելեան և Պռոշեան իշխաններու ներկայութեամբ։ Անդ էր և Եսայի վարդապետ Նչեցին, զոր կանխաւ յիշած ենք։ Այդ գումարման մէջ ժողովական նամակ մըն ալ գրուեցաւ կաթողիկոսին, և պարտուպատշաճ ոճով ու յարգանօք խնդրեցին յանուն ամենայն ազգին, որպէս զի նորութիւններէն հրաժարի և աւանդութիւնները պահպանէ։

147. Օրբելեան յառաջ կը բերէ նամակին պատճէնը, որոյ գլխաւոր և կանոնական կէտերուն նիւթն է, միայն երեք սուրբ ժողովները ընդունել և Քաղկեդոնինը մերժել, և հաստատուն մնալ

ազգային ժողովներու որոշմանց վրայ, որ քաղկեդոնեան դաւանութիւնը չընդունեցան։ Այս կարգին մէջ յիշուած ժողովներն են. 1. Շահապիվանու՝ Յովհան Մանդակունիի ժամանակ. 2. Բաղաքուղաշտի, Բարգէնի ժամանակ. 3. Դվնայ Ներսէս Շինողի ժամանակ. 4. Դվնայ Մովսէսի ժամանակ. յորում Թուական Հայոց եղաւ. 5. Դվնայ՝ Աբրահամու ժամանակ Կիւրիոնի դէմ. 6. Պարտաւայ Եղիայի ժամանակ Ներսէս Բակուրի դէմ. 7. Սիւնեաց Եղրի ժամանակ Կարնոյ ժողովը մերժելու համար. 8. Մանազկերտի Օձնեցւոյն ժամանակ Եղրի ժողովին դէմ. 9. Անւոյ Վահան Սիւնիին դէմ. 10. Դեսկանի ժողով Զաքարիայի և Իվանէի ժամանակ Վրաց և Հոռոմոց դէմ։ Անկէ ետքը ժողովական նամակը կ'ակնարկէ ուրիշ նորութեանց, զորս Անաւարզեցին կը պաշտպանէր և որոց դէմ Արևելեայք կը պնդեն ազգային եկեղեցւոյ հնաւանդ կանոնները, և են. 1. Բաժակին ջուր չխառնել. 2. Մէկ պատարագի շատ պատարագիչ չունենալ, որ Ասորւոց սովորութիւնն է. 3. Եկեղեցւոյ մէջ կերուխում չընել և դուռերը բաց չթողուլ. 4. Հոռոմոց եկեղեցին չմտնել, և տօնները անոնց հետ չընել, գլխաւորապէս ծնունդն ու աւետումը։ 5. Նաւակատիքները իւղով և պանիրով լուծել առանց մսի. 6. Հիւանդաց վրայ օծման իւղ չը գործածել. թէպէտ երախայից իւղին համար կըսեն թէ կընդունեն։ Նամակին վերջը կը գրեն այն նշանաւոր զրոյցը, որ յառակտ անցած է թէ, Հաւան եմք մեք ընդ մեր հարսն ի դժոխս իջանել, և ոչ ընդ Հոռոմոց յերկինս ելանել։ Եւ որպէսզի կասկածը փարատի, կը հրաւիրեն կաթողիկոսը, որ հեննիտիկոն թղթով, այսինքն է հաւատոյ պատկանեալ պաշտօնական կոնդակով մը ազգային եկեղեցւոյ ուղիղ դաւանութիւնը և սուրբ կանոնները յայտարարէ և հաստատէ, և գաղթակղութիւնը վերնայ։ Իսկ եթէ իրենց առաջարկը չընդունուի, մեղմ կերպով մը կը սպառնան կաթողիկոսէն բաժնուիլ, և եթէ բռնութիւն ալ գործածէ պիտի չը զիջանին։

148. Ժողովին և ժողովական թուղթին թուականը ճշտիւ նշանակուած չէ Օրբելեանէն, և ոչ ալ ըսած է թէ ինչ եղաւ իրենց թուղթին արդիւնքը։ Որովհետև կը յիշէ զայն անմիջապէս ծռազատիկին պատմութենէն ետքը, և Անաւարզեցիին կաթողիկոսութեան սկիզբը, ուստի սովորութիւն է այդ միջոցին դնել զայն (1294 կամ 1295)։ Արևելեայց հակառակութեան հետ Անաւարզեցիին դիմաց զօրաւոր արգելք հանեցին Կոռիկոսեան ազգատոհմին ներքին խռովութիւնները, և իրարու ձեռքէն թագաւորութիւնը խլելու համար գործուած անիրաւութիւնները (յօդ. 144)։ Ոտանաւոր յիշատակարանն ալ, զոր Հեթում թագաւոր գրած է իւր աստուածաշունչ գիրքին վերջը, և յորում հանդարտ

և խաղաղ վիճակի մը կը յայտնէ միևնոյն (1295) թուականը կը կրէ, և անկէ ետքը կը սկսին (1296), Հեթումի մեկնելը, Սմբատի բռնակալելը, և այլ եղերական դործերը, զորս յիշեցինք։ Բնական է ուրեմն որ դժուար պիտի ըլլար Անաւարզեցիին իր նպատակը գործադրել այս միջոցին, և ազգային ժողովով հաստատել տալ իւր կազմած տօնացոյցը ու ծիսարանները։ Դուցէ այդ յաջողութեան փափաքով էր, որ Անաւարզեցին յեղյեղուկ քաղաքականութեամբ գործակից և կամակից գտնուեցաւ Կոռիկոսեանց ամեն թեկնածուներուն, Սմբատն ալ պսակեց, Կոստանդինն ալ ճանչցաւ, Հեթումն ալ լքեց՝ որուն հետ այնչափ ներքին ու սերտ բարեկամութիւն ունէր։ Նա կուզէր թագաւորական իշխանութիւնը միշտ իւր կողմն առնել, և ինկածը կը մոռնար երբ նոր մը կը զօրանար։ Իսկ Ստեփանոս Օրբելեան նկատելով որ Անաւարզեցին իւր նպատակէն հեռացած չէ, ժողովական նամակէն յետոյ, միևնոյն հակաքաղկեդոնական ուղղութեամբ գիրք մըն ալ կը շարադրէր (1302), որ Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց անունով տպագրուած է Նալեան Յակոբ պատրիարքին օրով (1755)։ Այդ հերքումը գրելէն քիչ ետքը վախճանեցաւ Ստեփանոս Օրբելեան լի արդեամբ (1304), բայց իւր մահուամբը Արևելեայ վարդապետներուն խումբը ժիր գլուխէ մը զրկուեցաւ, և Օրբելեան Յովհաննէս, որ իւր ազգականին յաջորդեց, անոր հոգին ունեցաւ, բայց կարողութիւնը չունեցաւ, որչափ ալ Սիւնեաց իշխան և արքեպիսկոպոս էր միանդամայն։ Միակ օրինակն է նա մեր պատմութեան մէջ, եկեղեցական դասի պատկանող աւատապետ իշխանի մը, որպիսիք բազմաթիւ էին Արևմուտքի մէջ, և ինչպէս էր Նոյնիսկ Արևմուտքի հայրապետ Հռովմի պապը։

149. Արևելեայց հակառակութիւնը ջլատուած էր Ստեփանոս Օրբելեանի մեռնելովը, և Կիլիկիոյ նոր թագաւորը շփոթները հանդարտուած էին Թորոսեան Լևոնի թագաւորութեամբ և Հեթումի թագաւորահայրական հսկողութեամբ։ Անաւարզեցին նորէն պատեհ գտաւ իւր առաջին դաղափարը առջև մղել, և ազգային ժողովով իւր կազմած տօնացոյցն ու յայսմաւուրքը և փոփոխած ծէսերն ու կանոնները հաստատել տալ։ Այդ նպատակով շրջաբերական հրաւէր կարդաց ամեն եպիսկոպոսներու, առաջնորդներու և վարդապետներու, որպէս զի գան գումարուին Սսոյ կաթողիկոսարանը, և ազգային ժողովով պէտք եղած բարեկարգութիւնները սահմանեն։ Հռոմկլայի աթոռը կործանուած լինելով Ստեփանոս կաթողիկոսի գերութեան ատեն, Գրիգոր առաջին կաթողիկոսն եղաւ, որ հաստատապէս աթոռը Սիս փոխադրեց (1293),

ուր և մեաց աթոռը մինչև որ անտի Էջմիածին փոխադրուեցաւ դարուկէս ետքը (1441)։ Կերևի թէ Անաւարզեցին չէր ծածկեր իւր առաջարկութիւնները, այլ ի հարկէ անոնք գեղեցիկ երանգներով կը զարդարէր, ազգային եկեղեցւոյն վիճակը պակասաւոր ցուցնելով, և օտարներուն վիճակը բարձրացնելով, այլ և միանգամայն ամեն բան ժողովական հաւանութեան ենթարկելով։ Թէպէտ և չունենք Անաւարզեցիին գրութեան պատճէնը, այլ կը տեսնենք որ Յովհաննէս արքեպիսկոպոս Սիւնեաց և Զաքարիա արքեպիսկոպոս Արտազու, պատահական խորհրդակցութիւն մը ունեցած են Դավրէժ քաղաքը, ուրիշ եպիսկոպոսներու և վարդապետներու մասնակցութեամբ, և կարծիքներ փոխանակած են Անաւարզեցիին մտածած նորութիւններուն վրայ, ինչպէս են բաժակին ջուրը, ծնունդին տօնը, և այլն։ Բայց համաձայնութիւն չեն կրցած գոյացնել, զի Յովհաննէս պնդած է հինին պահպանութեան վրայ, իսկ Զաքարիա զիջողութեան միտումներ է ցուցած (Զամչ. Գ. 305)։ Ուրիշ նշանաւոր անձանց մէջ, որք Անաւարզեցիին կողմանէ յատկապէս հրաւիրուեցան, կը յիշուին Բջնոյ արքեպիսկոպոսը և Վարագայ առաջնորդը, Յովհաննէս Երզնկացի և Եսայի Նչեցի վարդապետները։

150. Կ'երևի թէ Անաւարզեցին բարեյոյս էր իւր նպատակին հասնելու, զի թագաւորն ու թագաւորահայրն համամիտ էին արդէն, Կիլիկիոյ եպիսկոպոսութիւնը շահուած էր, Արևելեան եպիսկոպոսներէն ոմանք համաձայն էին, և ընդդիմադիրներ հաւանաբար բացակայ կը մնային։ Այլ Գրիգոր չկրցաւ իւր ակնկալած յաջողութիւնը տեսնել։ Ղազար Ջահկեցի իւր գաւազանագիրքին մէջ, գրաւոր թէ անգիր աւանդութենէ քաղելով կը յիշէ, թէ օր մը երբ իր աթոռին վրայէն հայհոյէր զառաջին սուրբ հայրապետս մեր, ի հարկէ իւր նորութեանց յարգը դրուատելով, աթոռէն ինկաւ և դիւահարեցաւ, իմա կաթուածահար եղաւ կամ վերնոտեցաւ, և քիչ օրէն վախճանեցաւ (1307 սկիզբ)։ Սմբատ պատմիչ պարզապէս կըսէ թէ մեռաւ Տէր Գրիգոր կաթողիկոս (Սմբ. 127), սակայն նա միշտ ճոխ չէ իւր պատմական մանրամասնութեանց մէջ, մանաւանդ իւր գործին վերջին գլուխներուն մէջ։ Գրիգորի մահուան թուականը ճշտիւ չենք գտներ ուրեք, այլ յայտնի է թէ մեռաւ նա ժողովի բացումէն քիչ յառաջ, որ տեղի ունեցաւ ծաղկազարդի օրը (1307 մարտ 19)։ Գրիգորի ժողով մը հրաւիրած լինելը, և իւր մահուանէ անմիջապէս ետքը ժողովին գումարուելը, բաւական են ցուցնել թէ Գրիգոր մեռաւ ժողովին բացումէն քիչ առաջ, և թէ այն միևնոյն ժողովն է, որուն եկած էին եպիսկոպոսներ կաթողիկոսի հրաւէրով, և շատեր հաւանաբար ներկայ եղան

կաթողիկոսին մահուան և յուղարկաւորութեան։ Ժողովը գումարուեցաւ Սսոյ կաթողիկոսարանը, հրամանաւ և իշխանութեամբ թագաւորին և թագաւորահօրն, որք ամենայն հաւատարմութեամբ հետևող էին Անաւարզեցիին ուղղութեան, եթէ նոյն ինքն Անաւարզեցին Հեթումին հետևողը չէր, ինչպէս շատեր կը կարծեն։ Ժողովը նշանաւոր եղաւ իւր տեսակին մէջ իբրև նուիրագործում լատինամիտ ուղղութեան, որ սկսած էր Կիլիկիոյ մէջ տիրապետել, և որ իւր վերագոյն գագաթնակէտը հասաւ այս առթիւ։ Ժողովին նախագահ բազմեցաւ Կոստանդին արքեպիսկոպոս Կեսարիոյ և անկէ զատ գտնուեցան այլևս քառասուն եպիսկոպոսներ, որոնց քսանևհինգը Կիլիկիոյ և փոքր հայոց գաւառներէն, և տասուերեքը արևելեան վիճակներէն, այսինքն են, Երիզա, Բաբերդ, Բասէն, Անի, Կամախ, Մարանդ, Սասուն, Ճապաղջուր, Խորձեան, Մեծկերտ, Զմշկածագ, Մժնկերտ և Օձոց։ Երկու եպիսկոպոսներ ալ հեռաւոր գաղթականութիւններէն էին։ Յուսիկ եպիսկոպոս Կոստանդինուպոլսոյ և Եսայի եպիսկոպոս Թեսաղոնիկէի։ Եպիսկոպոսներէն զատ կը յիշուին տասուերկու վարդապետներ և եօթը վանահայրներ, և ոչ սակաւ աւագերէցներ և քահանաներ, և բազմաթիւ իշխաններ։

151. Ժողովը իւր առաջ ունեցաւ գրութիւն մը, զոր ներկայեց Հեթում թագաւորահայր, իբրև հանգուցեալ կաթողիկոսէն իրեն ուղղուած իւր վերջին կամքը։ Այս թուղթը, ինչպէս այսօր հասած է մեզ Կալանոսի պատմութեան մէջ, գրուած է ռամկօրէն լեզուով և ստորին ոճով. կաթողիկոսը թագաւորահօր կը յանձնարարէ որպէս զի լիապէս հաւանի իւր առաջարկութեանց, զորս կը փաստաբանէ իբրև օգտակար և կարևոր, և իբրև համաձայն վարդապետութեան մեծ եկեղեցւոյն Հռովմայ։ Միանգամայն կ'առաջարկէ դաւանական ոճով խոստովանութեան գիր մը և իւր կարևոր կարծած կանոնական փոփոխութիւնները։ Այդ ամենը պարունակուած է յետագայ ինն գլուխներու մէջ, որք յետոյ նկատուեցան իբրև գլուխք ժողովոյն Սսոյ, և եղան քար գայթակղութեան և պառակտմանց պայծառ աղբիւր մէջ։ Ինն գլուխներն են. 1. Ընդունիլ ի Քրիստոս երկու բնութիւն, երկու կամք և երկու ներգործութիւն։ 2. Սուրբ աստուածին մէջ աւելցնել Քրիստոս բառը։ 3. Ծնունդին տօնը դեկտեմբեր քսանըհինգին կատարել, և անոր յարակից տնօրինական տէրունիները նոյն հաշուով փոխել, և սրբոց տօներն ալ կատարել ըստ ամսաթուի և ըստ յայսմաւուրաց, 4. Երկու շաբաթապահք պահել ծննդեան և յայտնութեան, ծննդեան բարեկենդանը հաշուելով դեկտեմբեր 18-ին և յայտնութեանը դեկտեմբեր 30-ին։ 5. Ծննդեան և յայտնութեան ճրագա-

լոյցները ձուկով ու ձէթով լուծել, կաթն ու իւղը մերժելով։ 6. Պատարագի մատուցման համար իւրաքանչիւրին իւր աստիճանին համեմատ զգեստաւորել։ 7. Պատարագի սեղանին վրայ գորփուրայ կամ մարմնակալ գործածել։ 8. Պատարագի բաժակին ջուր խառնել։ 9. Ընդունել հաւասարապէս եօթը տիեզերական ժողովները, որ է ըսել, առաջին երեքէն զատ, Քաղկեդոնի, Կոստանդնուպոլսոյ երկրորդ և երրորդ, և Նիկիոյ երկրորդ ժողովներն ալ։ Այդ գլուխներէն առաջինն ու վերջինը, քանիցս Յունաց կողմանէ պահանջուած կէտերն են։ Եթէ լատիններուն համաձայնիլ պէտք ըլլար, պէտք էր, որ մինչև չորեքտասաներորդ ժողովը հանէին, աւելցնելով նաև Կոստանդնուպոլսոյ չորրորդ, Լատերանեան առաջին և երկրորդ և երրորդ և չորրորդ, և լուգտանեան առաջին և երկրորդ ժողովները։ Երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ և ութերորդ գլուխներն ալ քանիցս Յոյներէն պահանջուած ծիսական փոփոխութիւններն են, իսկ վեցերորդ և եօթներորդ գլուխները աննշանակ կէտեր են, որք մտածել կուտան, թէ Հայերը եկեղեցական զգեստաւորութիւն չունէին, կամ սեղանի վրայ սփռոց չէին գործածեր արդեօք։

152. Պէտք է ենթադրել որ ներկայ ժողովականներ մեծ դժուարութիւն հանած չլինին այդ գլուխներու դէմ, և կամ իբրև հանգուցեալ հայրապետի նուիրական կամք, կամ թէ իբրև քաղաքական իշխանութեան բռնադատիչ հրաման, ընդունած ըլլան առաջարկեալ գլուխները։ Սակայն կրնանք արդեօք ապահովաբար հաստատել թէ իրօք Անաւարզեցւոյն գրուածն էր Հեթումի մէջ տեղ բերած թուղթը։ Կաթողիկոսը մեռած էր, և չէր կարող դիտողութիւն ընել, նորա կնիքը ուրիշի ձեռք ինկած էր՝ որ կարող էր ուղածին պէս գործածել, և զարմանալի է որ թագաւորի արքունիքէն կ՚ելլէր այդպիսի գիր մը, և ոչ կաթողիկոսարանի եպիսկոպոսներուն ձեռքէն։ Գրուածին ստորին լեզուն անվայել էր կրօնական և պաշտօնական գրութեան, և անյարմար էր Անաւարզեցիին անձին, որ գրագէտ անձ մը եղած էր, և բոլորովին անլուր նորութիւն մըն էր ռամիկ լեզուով եկեղեցւոյ և հաւատոյ գիրեր պատրաստել, երբ նոյն իսկ հայրապետական սովորական թղթակցութիւնք գրոց ընտիր լեզուով կը գրուէին։ Որչափ ալ հնար է ըսել, թէ ներկայ եպիսկոպոսներ կրնային դիտողութիւն ընել եթէ կասկածելու տեղի ըլլար, սակայն դիւրին է պատասխանել, թէ քանի որ արքունի կամք մը կ՚իշխէր ժողովին, և ժողովականներուն մեծամտութիւնը շահուած անձեր էին, և գործերուն ձևը նախապատրաստուած ընթացքի մը կը հնազանդէր, և գործին հետևանքը գործնական արդիւնքէ զուրկ պիտի մնար,

եպիսկոպոսներ և ժողովականներ կրցան աւելորդ նկատել որևէ դիտողութիւն, և զիջողական տկարութեամբ, և առանց ժողովական վիճաբանութեանց, օրը օրին գործը փակեցին և մեկնեցան։ Ընդունելով հանդերձ թէ Անաւարդեցիին ուղղութիւնը կատարելապէս օտարամիտ էր, մեք տակաւին չենք կրնար Անաւարդեցիին վերագրել իր անձին անվայել և իւր կարողութեան անյարմար գրուած մը։ Որչափ ալ Անաւարդեցին բուռնէր իւր նպատակին հասնել, սակայն նա յանձն չառաւ երբէք ինքզինքը ստորնացնող բան մը ընել, և իւր ընթացքին մէջ ցուցուց և պաշտպանեց այն սկզբունքը, թէ առանց ազգային ժողովոյ պէտք չէ ինչ գործել, և այս սկզբամբ յարգեց միշտ Արևելեայց հակառակութիւնը, և վերջնական քայլ մը չառաւ։

153. Հռովմէականք մինչև ցայսօր մեծ ոյժ կուտան Սսոյ ժողովին, իբր այն թէ Հայոց ազգային եկեղեցւոյն աւանդական հաւատքը կը պարունակեն անոր ինն գլուխները։ Եթէ կուզեն ծանրակշռութիւն տալ Հայոց ազգային ժողովին, պէտք է բաղդատեն զայն հնագոյն բազմաթիւ ժողովներուն հետ, որ շարունակ մերժած են Սսոյ ժողովին ընդունածները, և նաև յետնագոյն ժողովներուն հետ, որք մերժեցին անոր որոշումները։ Նոյնիսկ յիշեալ ժողովին իւր մէջ ցուցած տկար կողմերը դիտողութեան արժանի են, քանի որ որոշումները կը հիմնուին գռեհիկ գրուածի մը վրայ, որք ընդհանուր ընդունելութիւն և գործադրութիւն չունեցան, և հազիւ թէ արքունական կամքի զօրութեամբ կարճ միջոց մը Սսոյ քաղաքին մէջ գործածուեցան, իսկ դուրսը կռիւներու և հակառակութեանց հանդիպեցան։ Ինն գլուխներէն վեցերորդը միայն, զգեստաւորեալ պատարագելը, գործադրուած կը տեսնենք, բայց այն ալ հնաւանդ սովորութեան և 1204 տարուոյ ժողովին վերանորոգուած էր, պատահական խափանում մը բառնալով։ Ո՞ւր թողունք որ Սսոյ ժողովը ոչ բոլոր հայ եպիսկոպոսներու դումարումն էր, ոչ հայրապետական իշխանութեամբ զօրացած էր, այլ լոկ արքունական իշխանութեան գործ էր, որով պէտք է որ Հռովմէականք ընդունեն, թէ Սսոյ 1307 տարուայ ժողովը, և ոչ իսկ կանոնական ժողով մը կրնայ համարուել, նոյն իսկ իրենց պաշտպանած սկզբունքներուն համեմատ, և յետագայ դէպքերն ալ հաստատեցին թէ ինչպէս անզօր էին Սսոյ ինն գլուխք կոչուած որոշումները։

Մ. Ա. ՕՐՄԱՆԵԱՆ

ԵՐԿՈՒ ԸՆԿԵՐ

I

Ամպը եկաւ, երկինքն առաւ,
Ծնեց մրրիկ կատաղի.
Փոքրկի հեռ հեռու թռաւ
Հոգիս անսանձ, ամեհի։

Այնտեղ, անծիր ոլորտներում
Հոգիս ընկեր փոքրկին
Թռչում է միտս, առաջ սուրում...
Ահ չգիտէ իմ հոգին։

ՄԻԱՅՆ ՄԻ ԺՊԻՏ

II

Միայն մի ժպիտ սիրավառ դէմքին՝
Փայլուն, արտաքուղխ, անմեղ ու սեղոյշ.
Եւ զարնանաբեր իմ կեանքի շէմքին
Խոցուած, նեստահար ընկած եմ անոյժ։

Եւ մատաղ կեանքիս բացուած վէրքերից
Արիւն է հոսում՝ եռուն, փրփրալից.
Իմ կեանքն է հոսում, եւ ես կը մարեմ,
Դեռ նոր նստանչած մի ոտ անենեմ...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՏԱՆՋՈՒԱԾԸ

I

Ճլը՞փ, ճլը՞փ, ճլը՞փ... Թափւում էր հալուող ծիւների ջուրը կտուրներից և թիթեղեայ խողովակներից. փողոցներում կազմւում էր առուականման հոսանքներ և հոսում ընթացքի յարմար ուղղութիւնների վերայ։

Վատ օր էր. խստասիրտ երկինքը մռայլ էր ու դաժան. մուգ, թանձր, կուտակուած ամպերից տեղում էր ծնախառն անձրև. օդը փոքր ինչ տաք էր, և հէնց այդ տաքութիւնից էլ սաստիկ հալիլոց էր. մանաւանդ անձրևը՝ աւելի էր նպաստում հալուելուն։ Խիտ ամպերի արանքից արեգակի մի շող անգամ չէր թափանցում խոնաւ երկրի վրայ։ Փողոցներում սարսափելի ցեխ էր, անց ու դարձողների թիւը շատ. նրանցից շատերը հովանոցները դլխներին, տաք վերարկուների մէջ փաթաթուած, բեռնի պսպղուն կրկնակոշիկները հագներին՝ ուրախ, դուարթ դէմքերով՝ հապճեպով քայլում էին լպրծուն մայթերի վրայով ու անցնում հեռանում. նրանց փոյթը չէր՝ թէ ծիւն է, անձրև, եղանակը խիստ ու այլանդակ. նրանց ոչ մի բանին չէր խանդարում օրուայ վատութիւնը. նրանք ամեն միջոց ունէին ազատ մնալու դրանից։ Եւ դալիս էին՝ նոր մարդիկ, նոր դէմքեր, նոր խմբեր՝ բոլորը հագնուած, ոմանք պճնուած, զուգուած, ոմանք, թէև հասարակ, բայց ամուր հագնուած. մի խօսքով ոտներին տաք, մարմինները ամուր... ու անցնում էին հեռանում... Գալիս էին ու անցնում և այդպէս անվերջ...

Նոյն այդ մարդաշատ մեծ փողոցի մայթի վրայ կանգնած էր մի կիսամերկ, թշուառ մարդ. դժնդակ կեանքի հարուածներ ուներ այդ մարդը իր վրայ, ասես քմահաճ բաղդը՝ խաղեր էր խաղացել նրա տառապող դլխի հետ. նրա մի ձեռքը ծոցումն էր, միւս ձեռքը՝ որպէս մի անշարժ փայտի կտոր կա-

խուսած էր աչ ուսից. նրա դդեսար պատառոտուն էր, ծուատուած փէշերով. անսրինակ ու կեղտոտ լաթերով կարկատած էր նրա ծնկները, թիկունքը ու ծախ թեւի արմունկը. մի ոտքին հագած ունէր հին, երեսը ճղուած կրկնակոշիկ, միւս ոտքին նոյնպէս հին, ծրմռուած ու ճղճղուած կոշիկ. նրա ոտքերը բաց էր, երևում էր սառած, կապուտած կաշին...

Այդտեղ կանգնած՝ նա հետամուտ էր լինում լաւ հագնուած մարդկանց՝ հարուստներին և հացի փող պահանջում. ողորմութիւն չէր խնդրում, այլ մօտենում էր ու ասում.

— Քաղցած մարդ եմ, տուէք ինձ հացի փող։

Իսկ մարդիկ անտարբերութեամբ երեսները թեքում էին հեռանում, ուշադրութիւն չդարձնելով նրա խօսքերին, երբեմն սառնութեամբ նայում էին նրա նողկալի արտաքինին, սմքած դէմքին, և ասես թէ ղղուանքներն էր շարժում այդ խեղճ աւերուած մարդը, որ խոր խոցեր ունէր իր սրտի մէջ, իր ցաւոտ կրծքի տակ։

Այսօր նա ամեն անգամ մերժուում էր և լռութեամբ ետ կանգնում, և երբ տեսնում էր մի ուրիշն է գալիս, մօտենում էր կրկնում նոյն խօսքերը, նոյն ցաւոտ ու պահանջող շեշտով. այդպէս մի քանի անգամ պահանջեց, մերժուեց ու ետ կանգնեց։

Ահա գալիս են երկու գեր, հաստափոր պարոններ։

Թշուառականը մօտեցաւ նրանց և ձեռքը ծոցից հանելով ասաց.

— Պարոններ, քաղցած մարդ եմ, տուէք ինձ հացի փող։

Պարոնները մերժեցին։

— Աստուած տայ. ասացին նրանք ու անցան։

Մարդը վերստին ետ կանգնեց, դարձեալ ձեռքը դրեց ծոցը։

— Աստուած տա՜յ... մրմռաց նա ու մի թունոտ հայեացք ձգեց անցնող պարոնների վրայ — Ո՞ւմ միջոցով տայ... Հա՛, Աստուած տայ, ո՞ր Աստուածը... էն, որ անունը կայ ինքը չկա՜յ... Հմմ. աղիքներս գալարուում են — Աստուած տայ. սոված որդը կրծում է ներսս, — Աստուած տայ... Հը՞, Աստուած տայ։ Դէ տո՛ւր. նա ձեռքը հանեց ծոցից ու բարձրացրեց վեր, և խօսքերը ուղղեց դէպի երկինք, ապա իջեցնելով ցած մրմնջաց ծաղրով.

—Տեսնո՞ւմ էք, հաց չի տալի քաղցածին, ծեր ճանաչած Աստուածը։

Ու մէկ էլ նորից վերև նայեց։

—Խենթ է՜... ասաց մի անցորդ ու դարձաւ ընկերոջը.— Տես ինչ է պնում։

Ընկերը տեսնելով Թշուառականի վեր ուղղած հայեացքը և երկարացրած վիզը, որից պլանդակօրէն դուրս էր ցցուել բգի ոսկորը՝ երկար ու բարձր քրքջաց։

Մարդը ընդունեց իր նախկին անյոյզ դիրքը։

Շտապով քայլում էր մի դեղեցիկ պարոն հովանոցը դլխին, և մի ոսկրոտ ծառայ էլ նրա ետևից՝ լիքը կողովը ձեռքին։ Թշուառը նետուեց դէպի պարոնը, և ուղիղ նայելով նրա աչքերի մէջ վստահ ու պահանջող ձայնով ասաց.

—Պարոն, տո՛ւէք ինձ փող, քաղցած եմ։

—Քաղցա՞ծ... կրկնեց պարոնը.—ձեռքիս ոչինչ չկայ հաւատայ։

—Մարդ եմ, մարդկանց մէջ և քաղցած, ասաց Թշուառը նոյն վստահ ձայնով։—Տուէք ինձ հացի փող։

—Չկայ, ասում եմ. խստութեամբ ասաց պարոնը ու իջաւ մայթից, մի քայլ արաւ ու կրկին բարձրացաւ մայթի վրայ։ Ծառան, որ մինչև այդ կանգնած կատաղի աչքերով նայում էր խեղճին՝ հետևեց իր պարոնին... Թշուառականը նայեց նրանց ետևից, նայեց հացով լի կողովին՝ որ իր քաղցած ախորժակն էր գրգռում։

—Չկա՞յ. կրկնեց նա ինքն իրան. ապա մի ինչ որ դրդումով՝ վազեց նրանց ետևից. թոյլ ոտքերը հաղիւ փոխելով հասաւ ծառային՝ ձեռքը մեկնեց և կողովից վերցրեց սպիտակ հացի մի փոքրիկ կտոր ու ագահաբար սկսեց ծամել։

Ծառան իսկոյն նկատեց։

—Ի՞նչ ես անում, յիմար. գոռաց նա և բռնեց խեղճին՝ աշխատեց խլել հացի կտորը։ Այդ միջոցին պարոնը ետ նայեց և բարկացած հրամայեց ծառային.

—Խփի՛ր այդ անպիտանին։

Պարոնի հրամանը լսելուն պէս, ծառան յարձակուեց

թշուառի վրայ և ոսկրոտ ձեռքով երկու անդամ ուժգին խփեց նրան ծնոտին ու մի անդամ էլ ոտքով խփեց վախտ ծնկներին, որ նա ընկաւ ցեխոտ մայթի վրայ, բայց ոչինչ չխօսեց՝ ճնաց լուռ հացի կտորը ձեռքին. քիչ յետոյ դժուարութեամբ բարձրացաւ ու սկսեց արիւն թքոտել։ Հարուածներից նրա բերանը արնել էր՝ արիւնով լցուել. մի կողմից արիւն էր թքում, մի կողմից էլ ծամում հացը։ Ձնախառն անձրևը թափւում էր նրա թիկունքին, բաց գլխին, որից հէնց նոր ընկաւ իւղաժամկ գլխարկը ցեխի մէջ։

Պարոնը մօտեցաւ նրան. հրեց հովանոցի կոթով և ասաց.

—Ինչո՞ւ հացը գողացար.

—Ինչո՞ւ, չիմացար որ ասի քաղցած եմ։

Մօտեցող ոստիկանը երկու անդամ հրացանի սուլինով խփեց նրան և բղաւեց.

— Կորի՛ր, դու սատանայ։

Թշուառականի հիւանդոտ աչքերը փայլեցին. երկիւղի նշան խաղաց նրա նիհար դէմքին. նա եա-եա քաշուեց՝ երկչոտութեամբ որոնելով ընկած իր ցաւերի ու տանջանքների լուռ վկայ գլխարկը. տեսաւ, և վերցնելով թափ տուեց վրայի ցեխը ու ծծած ջուրը. ապա հացը ծամելով, երբեմն-երբեմն էլ արիւն թքելով՝ դանդաղութեամբ քայլեց պարոնի դնացած ճանապարհով. նա քայլում էր շատ դանդաղ. մի ոտքը դցում էր առաջ և միւսը հաղիւ քաշում նրա ետևից. իսկ աջ թևը օրօրւում էր ինչպէս թոյլ մեխուած մի փայտի կտոր։ Պարոնն ու ծառան շատ հեռու չէին, նա ուզում էր հասնել նրանց. հասնելը շատ հեշտ էր, բայց թշուառականի ոտքերն սնդոր էին ու թոյլ. նա եղնում էր քայլել շուտ-շուտ, արագ-արագ. սակայն ոտքերը, այն ցաւոտ ոտքերը չէին հնազանդւում նրա կամքին. և նա աչքերը ծգած պարոնի և նրա ծառայի վրայ՝ քայլում էր որքան ոյժ ունէր։ Առատ շռայլքով պենուած հասարակութեան մէջ, նա երևում էր՝ ինչպէս մի փալաս, գեղեցիկ, նոր շորերի շարքում։

Մռայլ երկինքը աւելի կախուել էր ցած. կտուրներից ծնաջուրը կաթ-կաթում էր միակերպ, տաղակալի ճրլիոցով։ Մարդը

պկուեց և ընկաւ դեռին. ծախ ձեռքով յենուեց վերկացաւ ու շարունակեց քայլել՝ իր ցաւոտ ընթացքով։ Տեղ-տեղ մարդկանց բաղմութիւնը՝ նրա աչքից ծածկում էր պարոնին ու ծառային. բայց նա՝ նրանց ամեն մի քայլին հետամուտ էր լինում։

Պարոնը ծառայի հետ ծռուեց մի ուրիշ փողոց. տանջուած մարդի հեռուող աչքերը նկատեց այդ, և նա ճիգ գործ դրեց՝ որքան կարելի է շուտ հասնել։ Ինքը առաջ էր ընկնում, իսկ ոտքերը ետ էին մնում. ոչ ձեռքն էլ ասես նրա համար մի աւելորդ բեռ էր։

—Ցողնել է՞ք, իմ թանկագին ոտքեր. ինքն իրան խօսում էր նա։—Նատ էք քայլել, այնպէս չէ՞. կեանքի քարոտ ճանապարհը մաշել է ձեզ... Օ՜ֆ... քայլեցէք, պարոնը գնաց ծառայի հետ... Վերջին խօսքերը արտասանեց՝ թոյլ ծիծաղով, և այդ ժամանակ նրա դէմքին փայլեց մի կծու, հեգնող ժպիտ։

Հասաւ այն անկիւնը, որտեղից ծռուեց պարոնը՝ փոքր ինչ կանգ առաւ, շունչ քաշեց, մի քանի անգամ խոր հոգւոց հանեց, ապա նայեց փողոցի ուղղութեամբ, բացի պարոնից ու ծառայից՝ ոչ ոք չկար փողոցում. կար երկու շուն, որոնք հոտոտալով ոսկոր էին փնտրում։

—Հը՞ըմ... խոր մտածման մէջ երկարացրեց նա։—Դրանք ինձանից բաղդաւոր են. ոտիկանը դրանց աղաւ շրջելուն արգելք չի լինում. իսկ ինձ քանի՞ անգամ են հայհոյել ու... էէ՞։

Նա շարժուեց և. մի փոքր արագ քայլեց առաջ. պարոնը այժմ հեռացել էր, հովանոցը դլխին ծառայի ետևից էր քայլում։ Մարդը հեւալով փոխում էր ոտքերը և երբեմն հաղում՝ արիւն թքում. նա արդէն հացի կտորը կերել, վերջացրել էր, բայց ներսը սոված որդը դեռ չէր հանգստացել, նա պահանջում էր էլի—էլի՞։

Մօտենում էր պարոնին, մի քանի քայլ էր մնում փոխելու և ահա կհասնէր, ինչ ուզում էր ասել՝ կասէր, կխօսէր...

—Պարոն, ծայնեց նա հեւացող ծայնով, և մեծ ու լայն գցեց քայլերը։

Պարոնն ու ծառան միաժամանակ ետ նայեցին ու էլի շարունակեցին քայլել։

—Պարոն, մէկ էլ կրկնեց մարդը։

Այս անգամ պարոնը կանգնեց. ծառան նոյնպէս։

Տանջուած մարդը հասաւ նրանց ու դլխարկը մեկնելով ասաց.

—Ա՛ռ, պարոն. առ դլխարկս քո հացի տեղ. տպա արիւն թքեց, յետոյ կոշտ հազաց։

Պարոնը երեսը կնճռեց ու խիստ զայրացաւ։

—Կորիր, այ խենթ։

Ու սկսեց քայլել։

—Խե՜նթ... Կրկնեց թշուառը. այո, խենթ... Կանգնիր, պարոն, մի շտապի, խօսք ունեմ ասելու։

—Գիժ է, պարոն. նկատեց ծառան։

—Այո, խենթ է. հաստատեց պարոնը։

Նրանք անցնում էին նեղ, ցեխոտ փողոցով. մօտեցան մի տան, մուտքի առաջ կանգնեցին. պարոնը հովանոցը ծալեց և թափ տուեց։

—Պարոն. լսուեց «խենթի» ձայնը։

—Օհ, անիծեալ, ի՞նչ է ինչ. զայրացկոտ ասաց պարոնը ու դարձաւ ծառային.

—Տուր ինձ կողովը, իսկ դու՝ այդ յիմար խենթին հեռացրու այստեղից. շուտ... հրամայեց նա ու ներս մտաւ։

—Պարոն, խօսք ունիմ ձեզ ասելու. ասաց խեղճը։

—Կորիր. լսուեց պարոնի նեղացած ձայնը։

—Տօ գիժ, կորի է. սպառնալից խօսեց ծառան։—Ի՞նչ ես սոված շան նման աչքդ դցել պարոնի ջիրին։ Քեզ ասում եմ հեռացի. դէ, թէ չէ հօ... Նա ցոյց տուեց բռունցքը—այ, ատամներդ կփշրեմ. խամ տեսար սրանց ուժը. դէ, հեռացի ասում եմ էէ... կփշրեմ։

Տանջուած մարդը կանգնել էր և աչքերը սևեռել տան մուտքին. նա ոչինչ չէր խօսում, լուռ էր. բայց ներսը խօսում էր, և ասես մի բան, շատ խորհրդաւոր բան կար թաղնուած նրա տանջուած հոգում, նրա ցաւոտ կրծքի տակ։ Նա դառն ու կծու ժպտաց։

—Հեռացիր է...

—Խօսք ունիմ պարոնի մօտ։

—Դէ կորի՛ է, դիժ հայուան, ուժգին բոթելով տասց ժառանն։

—Խեղճը սայթաքեց ու վայր ընկաւ քարերի վրայ. այդ ընկնելուն՝ սոսափիկ պէտք է ցաւէր, սակայն տեսա նա ցաւ չը զգաց. վեր կացաւ զննող հայեացքով նայեց տանը, մուտքին. ինքն իրան ինչ որ մրմռաց ու քայլեց եկած ճանապարհով։

Ջնախառն անձրևը դեռ շարունակւում էր թափուել. ահաւոր ամպերը հեռվեռէ թանձրանում էին ու խառնում. հալուածքից գոյացած առուակները՝ հոսում էին կառքերի անիւների ակօսած տեղերով. իսկ կաւրներից ծնաչուրը թափւում էր, թափւում։

Նա՝ այն աւերուած մարդը, դարձեալ գնում էր այն բաղմամարդ փողոցը, որտեղ անց ու դարձ էին անում՝ կեանքի տէրերը, կեանքի ծոլում լողացողները. նրանք՝ որոնց ժպտում էր քմահաճ բաղդը. նրանք՝ որոնք ապրում էին լի ու առատ, հանգիստ խաղաղ. նրանք՝ որոնք անտարբեր, անկարեկից են դէպի թշուառը, դէպի խեղճը, և նրանք՝ որոնց սրտերը քար է, հայեացքները սառն ու արհամարհող...

—Այո, քար են, բոլորը քար են. շուրջս ամեն ինչ քարից է, տները, պատերը, փողոցները... և մարդիկ, մարդիկ... Խօսում էր նա և քայլում ցաւոտ դանդաղութեամբ. նրա շորերը թրջուել, ջուր էր դառել...

Եւ նա դարձեալ քայլում էր...

II

Նոյն օրը երեկոյեան, երբ արդէն ծիւնը դադարել էր, հալուող ծիւները սառել, բարձրացել էր սառնաշունչ ցուրտ քամի՝ տանջուած մարդը կանգնել էր իր ատամները արնացնել տուող պարոնի տան առաջ։ Նա ուզում էր մտնել ներս, գնալ պարոնի մօտ և ասել նրան այն բոլորը, ինչ որ գիտէր, ինչ որ մթերուած էր իր ճնշուած կրծքի տակ. բայց սատանուում էր, չգիտէր ինչ անել. ապակեփայլ աչքերը գցել էր տան մուտքին, և նայում էր երկար, զննողաբար հայեացքով... Ահա մի քայլ

առաջացաւ ու կանգ առաւ. նա վախեցաւ՝ թէ մի գուցէ կը պատահի այն անողորմ ծառային. մի քայլ էլ արաւ ու կանգնեց մի վայրկենաչափ, ապա վճռական քայլերով բարձրացաւ երկրորդ յարկը. նա արդէն տեսել էր՝ թէ որ դրնով որ սենեակը մտաւ նա, այն պարոնը: Բարձրացաւ պատշգամբ, մօտեցաւ սենեակի դրան՝ կանգնեց սրտի բաբախիւնով ապակիներից նայեց ներս՝ աչքովը ոչինչ չընկաւ., մի քանի անգամ եւս նայեց, էլի ծառայիցն էր վախենում, տեսաւ ոչ ոք չկայ, սրտապնդեց ու ուժգին հրեց դուռը, որ մեծ թափով դիպաւ պատին, ապակիները զնգզնգացին ու աղմուկ բարձրացրին. ինքը մտաւ ներս. այդ ծայնին մի ուրիշ սենեակից վազեց այն գեղեցիկ պարոնը և յանկարծ կանգնեց մեխուածի նման, չռած աչքերը ծգեց խեղճի վրայ և ասես թէ սարսափեց տարօրինակ, անժամ այցելուից. նա իսկոյն ճանաչեց, թէ ով է այցելուն. ըստ երևոյթին լքումը տիրել էր նրան:

Այցելուն ոչինչ չխօսեց. վստահութեամբ մօտեցաւ մի աթոռի և նստեց վրան: Նա իր ցնցոտիներով ու խճճուած մազերով մի զզուելի կեղտոտ առարկայ էր, այդ շքեղ կահաւորուած սենեակի առարկաների շարքում. եղկելի դէմքին մի տեսակ ժպիտ էր նկատւում, որով կարծես հեգնում էր, այդ բոլոր զարդարանքները, այդ բոլոր կարասիքը և դրանց վայելողի զարմանքն ու սարսափը, և կարծես ասելիս լինէր՝ «ինչո՞ւ ես ապշել...»: Քիչ յետոյ նա փոխեց ժպիտը և բարեկամական հայեացքով սկսեց նայել պարոնին, որը արձանացել էր իր տեղում և աչքերը զարմանքից չռել:

—Ի՞նչ ես կամենում. հարցրեց տանտէրը առաջ գալով:

—Է՞ս... ես ոչինչ չեմ կամենում, այնպէս սիրաս ուզեց եկայ:

Պատասխանը չափազանց տարօրինակ էր, տանտէրը զուռնատուեց. նա երևի մտածում էր, որ այդ մարդուց վատ հոտ էր փչում, ի՞նչ ունէր որ եկել էր իր մօտ, խենթ մարդ է, չլինի թէ իր կեղտոտ լաթերի ծալքերում մի բան պահած լինի, ու հանի վնասի... նա անհանգստութեամբ հարցրեց.

—Ինչո՞ւ համար եկաք:

—Ե՞ս։

—Հա, դուք։

—Ես եկայ ձեզ տեսնելու. անվրդով ու անյոյզ պատասխանեց մարդը։

—Ինձ տեսնելո՞ւ.... ո՞վ ես դու։

—Փողոցի մարդ, որ բերանս արիւն լցնել տուիր. ասաց թշուառականը ու ժպտաց։

Պարոնը աւելի զուսնատուեց. նա դիտէր և ճանաչում էր, որ այն մարդն է, որին իր հրամանով ծառան խփեց տատմները արնացրեց. բայց ի՞նչի է եկել, արդեօք վրէժ առնելո՞ւ, թէ մի ուրիշ բանի։

Մարդը զգաց, որ պարոնը երկիւղ քաշեց և վախեցաւ իր ներկայութիւնից՝ ուստի ժպտալով հարցրեց.

—Ինձ չէք ճանաչում։

—Ինչպէս թէ չէք ճանաչում։

—Այո, չէք ճանաչում, ով եմ ես։

—Դու ո՞վ ես, որ ճանաչեմ քեզ։

—Ե՞ս... մի թէ չէք ճանաչում... իրաւունք ունէք չճանաչելու, որովհետև ես էլ մարդ չեմ, այլ մարդկային տականք... Իրաւունք ունէք։ Այո։

Տանտէրը ապշած նայում էր այդ ցաւոտ մարդուն. դուցէ ուզում էր յիշել թէ ո՞վ է, և դրա համար ձեռքը ճակատին դրած՝ երևի պեղում էր անցեալի յիշողութիւնները, թարմացնում էր թմրած ուղեղը, բայց յիշել, ճանաչել չէր կարողանում... և նա աթոռին նստելով հարցրեց.

—Ո՞վ ես, չեմ ճանաչում։

Թշուառականը կրկին ժպտաց։

Այդ ժպիտը դուր չեկաւ տանտիրոջ։

—Հարցնում եմ, ո՞վ ես, պատասխանիր. յօնքերը կիտած դիմեց նա անհաճոյ այցելուին։

Մարդը դարձեալ ժպտաց. ապա սկսեց հանդիստ խօսել.

—Ես մի աւերուած մարդ եմ, ես էլ ձեզ պէս մարդ էի, բայց թալանուեցի կեանքի ցաւոտ ճանապարհում... Այո, մարդ էի, իսկ ի՞նչ եմ այժմ... մի տրորուած, մերժուած, տանջուած

ու քաղցած արարած, մի անպէտք փշրուած մեքենայ, որ ոչ մի բանի չի հարկաւորում... Նա լռեց և մտածում էր, որ տանտէրը հիմա կճանաչի իրան՝ կամ ձայնից, կամ դէմքից, կամ մի որևէ նշանից։

Բայց ոչինչ չեղաւ, տանտէրը նորից հարցրեց.

—Ո՞վ էր և ո՞րտեղացի։

—Ես մարդ եմ։

—Այո, գիտեմ մարդ ես, բայց ի՞նչ մարդ։

—Ո՛չ, դուք ինձ մարդ չէք համարում. սակայն ես մարդ եմ. հարուստ քար աշխարհն էլ իմ հայրենիքն է, դուք էլ՝ իմ անխիղճ և ցաւերիս անտարբեր եղբայրն էք. ձեզ նման անխիղճ ու անողորմ եղբայրներ շատ ունիմ այս ապառաժ աշխարհում...

—Ի՞նչ էք ուզում ասել դրանով։

—Շատ բան, պարզ ճշմարտութիւններ։

Երկուսն էլ պահ մի լռեցին։

Տանտէրը երևի մտածեց, որ այցելուի արտաքինը, հեղնող ժպիտը և վստահ խօսելը լաւ բան չեն ասում. մանաւանդ, որ չի ասում՝ թէ ո՞վ է ինքը և որտեղացի։ Նա կնճռեց երեսը, վերկացաւ և զայրացած ասաց.

—Ոչինչ չի հասկացւում ձեզանից, ես բան եմ հարցնում, իսկ դուք խենթի պէս էք պատասխանում։ Բան ունիք ասելու՝ ասացէք, թէ չունիք՝ դուրս գնացէք։

—Դուրս գնա՞մ...

—Այո, դուրս գնացէք, ես ժամանակ չունիմ ձեզ լսելու։

—Ժամանակ չունէք լսելո՞ւ...

—Այո, ես տեղ եմ գնալու, ազատեցէք ինձ ձեզանից։

—Ձեզ ով է բռնել, կարող էք գնալ, ուր որ ուզենաք։

—Այդ իմ բանն է, կարող եմ թէ չեմ կարող. նախ դուք այստեղից դուրս գնացէք. ասաւ ու աթոռի վրայից վեր կացաւ, հանեց ժամացոյցը նայեց.—Արդէն ժամանակն է խօսեց ինքն իրան։

—Ուրեմն ինձ չէք ճանաչում. ասաց թշուառականը և հառաչելով վերկացաւ ու քայլեց դէպի դուռը.—Ինձ խենթ էք անուանում, այնպէս չէ՞...

—Այո՛, այո՛, գնա՛, հեռացիր։

Մարդը դուրս ելաւ, իջաւ սանդուխտներից ու կանգնեց փողոցում։

Նա սպասում էր պարոնին։

III

...Արդե՞օք դուրս պիտի գայ, թէ ինձ գլխից ոտ անելու համար ասաց՝—տեղ ունիմ գնալու... պատի տակ կանգնած մտածում էր մարդը։

Կաթնագոյն նօսր մառախուղը լցրել էր փողոցները. լապտերները վառւում էին և իրանց թափանցիկ լոյսի անորոշ բծերով լուսաւորում փողոցները։ Աստղազարդ դիշեր էր. ցուրտ էր ու պարզկայ. բայց տանջուած մարդը ասես ոչինչ չէր զգում, ասես նրա կիսամերկ մարմնին չէր ազդում այդ ցուրտը...

—Չէ, ես կսպասեմ նրան, դուրս կգայ՝ ամեն ինչ կյիշեցնեմ, կ'ասեմ, և այն ժամանակ... թէ դուրս չի գայ՝ կթողնեմ կհեռանամ... յետոյ դուցէ մի օր, մի տեղ կպատահեցնեմ...

Այսպէս էր մտածում նա, երբ յանկարծ սանդուխտների վրայ լսուեց ոտնածայներ։ Պարոնն էր. դուրս եկաւ տան մուտքից ու քայլեց. նա չնկատեց պատի մօտ կանգնած մարդին, որը շարժուեց տեղից ու՝ սկսեց հետևել իրան։

—Հիմի չ'ասել,—մտածում էր մարդը հետևելով պարոնին։—Այո, ասել, սրանից լաւ տեղ չկայ։ Եւ նա վճռեց իր մէջ՝ ասել։

—Պա՞ռոն. ծայնեց նա։

Պարոնը կանգնեց ու ետ նայեց. բայց ոչինչ չխօսեց։

Մարդը մօտենալով հարցրեց.

—Ցիշո՞ւմ էք այն, պարոն։

Պարոնը ապշեց և ճանաչելով նրան երկիւղով խօսեց.

—Ի՞նչը, փողոցի բռունցքնե՞րը. դուք արժանի էիք դրան։

Պարոնի ծայնը յուզմունքից ու երկիւղից դողում էր։

—Չէ պարոն, բռունցքները չէ. բռունցքների համար ես ոչինչ չեմ ասում. ես շատ ուրախ եմ, որ բռունցքները ծեզանից ստացայ. եթէ ուրիշ մարդից ստանայի՝ կտրանչայի, բայց

որ ձեղանից է, այսինքն քո ծառայից՝ շատ ուրախ եմ... Ես ձեզ բան պիտի հարցնեմ և խնդրում եմ պատասխանէք...

—Ի՞նչ բան։

—Մի պարզ ճշմարտութիւն։

—Ես ժամանակ չունիմ ձեզ լսելու և պատասխանելու։

—Կա՛յ, երկու խօսք։—Ցիշում է՞ք դուք, թէ երիտասարդ ժամանակներդ, ո՞վ էր ձեր մտերիմ և հաւատարիմ ընկերը։

—Ի՞... ձեռքը թափ տուեց պարոնը և քայլեց։—Ես ընկեր իսկի չեմ ունեցել, որտեղից յիշեմ։

—Մի շտապի, պարոն, կանգնիր, ասաց Թշուառը,—երկու խօսք ունիմ։

Պարոնը կանգ առաւ և զայրացած ասաց.

—Ի՞նչ էք ուզում. հացի փո՞ղ... առէք. նա ձեռքը դրրպանից հանելով մեկնեց։ Փողոցի մշուշապատ լապտերի աղօտ լուսով տեսնւում էր նրա ձեռքի սև հինգ կոպէկանոցը, որ պարզել էր Թշուառականին։

Բայց մարդը չուզեց, հրաժարուեց ասելով.

—Ողորմութի՛ւն... չէ, պարոն, շնորհակալ եմ. ես այսօր կուշտ եմ սովորականից. արիւնով շաղախուած հաց կերայ, միթէ դուք չտեսաք... Ես ձեզ հարցնում եմ՝ թէ...

—Ի՞նչ, անհանգստութեամբ ընդհատեց պարոնը։ Ըստ երևոյթին նրա երկիւղը երևի բաղմապատկուեց, որ ձեռքում սղմեց ձեռնափայտը և պաշտպանուելու դիրք ընդունեց։

—Հարցնում եմ, թէ ո՞վ էր ձեր երիտասարդութեան ընկերը։

Պարոնը գլուխը կախեց, ապա բարձրացնելով ասաց.

—Չեմ յիշում ոչ մէկին։

—Չէք յիշո՞ւմ... եթէ ունեցել էք, անպայման պէտք է յիշէք։

—Է՞, ով է միտք դարձնում նրանց վրայ. կամ նրանց յիշելս ինչ օգուտ. ձանձրացած ասաց պարոնը և ոտքը փոխեց։

—Կաց, կաց ասեմ։

Պարոնը ասես էլ երկիւղ չունէր. նա տեսնում էր, որ մարդը հանգիստ է, ուստի կանգնեց և ասաց.

—Դա։

Թշուառականը մի քայլ փոխեց դէպի պարոնը և կանգնեց։

—Քեզ ո՞վ ազատեց խեղդուելուց, սկսեց նա. այժմ եղակի էր խօսում հետը.—որ երիտասարդ ժամանակդ լողանում էիր մի վարար գետում... ո՞վ էր, որ փրկեց կեանքդ։

—Ի՞նձ։

—Այո, քեզ։

—Ես ունէի մի բարի ընկեր, այժմ մեռած. նա ազատեց իմ կեանքը։ Ես հոգով նրան եմ պարտական... Իսկ դու ո՞վ ես, որ անցեալս դիտես։

—Ես մի ժամանակ մարդ եմ եղել. իսկ հիմա չէ...

Լռեցին։

—Ասեմ, լսեցէք. շարունակեց մարդը։—Ցիշո՞ւմ ես, որ քո դողութեան համար հայրդ դուրս արաւ քեզ իր տնից և ծառաներին հրամայեց ներս չթողնել քեզ իր շէմքը... այստեղ սլացող կառքը անլսելի դարձրեց նրա խօսքերը։—Եւ այն օրից, դու հալածական ու անապաստան շրջում էիր փողոցներում, ով ապաստան տուեց քեզ, ով եօթ-ութ ամիս կերակրեց քեզ իր դրպանից, պահեց իր տանը, խնամեց եղբօրից լաւ... Ցիշո՞ւմ ես, որ նրա փողն էլ հատաւ, և նա դնաց պարտք արաւ քեզ կերակրեց, երբ հիւանդ էիր բժշկել տուեց, առողջացրեց. իսկ հայրդ բոլորովին չէր մօտենում, և քեզ իրան որդի չէր ճանաչում։ Կարծում եմ անշուշտ յիշելիս կլինես։

Պարոնը գլուխը կախ, աչքերը դեռնին լսում էր և լռում. քիչ յետոյ նա հաղաց մի անդամ և ասաց.

—Նոյն ընկերս, ողորմի հոգուն։

Թշուառականը ժպտաց։

—Ցիշո՞ւմ ես, շարունակեց նա,—երբ մի անդամ քեֆի ժամանակ կռիւ եղաւ քեֆ անողների մէջ, քեզ ուզում էին սպանել կամ խեղդել քո լպիրշ խօսքերի համար. ով էր քեզ ազատողը, վտանգից փրկողը, որ քո փոխարէն ինքը վիրաւորուեց թեւից... Նրանից յետոյ դու թողիր և հեռացար։ Իսկ այժմ, դու ո՞րտեղից դիտես, որ նա մեռած է ու թաղուած։

—Ես կարծում եմ, որ մեռած պիտի լինի. խօսեց պարոնը անհաստատ և ցածր ձայնով, աչքերը գցած մօտիկի մշուշապատ լապտերին։—Դու ո՞վ ես, քո ձայնը կարծես թէ ինձ ծանօթ է երևում։

Մարդը լուռ էր։

Ցուրտը հետզհետէ սաստկանում էր. մի կողմից էլ սառը քամի էր փչում. բայց այդ մերկ վախտ Թշուառը՝ ասես ոչինչ չէր զգում. նրա ներսը կար այնպիսի մի բան, որ Թոյլ չէր տալիս զգալու՝ ոչ մրսելը և ոչ ցուրտը. նա տաքացած էր և բորբոքուած։

—Ես ո՞վ եմ... կամացուկ շշնջաց նա։

Կէս բոպէ երկուսն էլ լուռ էին. պարոնը երևի յիշում էր անցեալի դէպքերը, և դուցէ նրա մտքով՝ շարար-շարան անցնում էր բոլոր պատահարները իր մանրամասնութիւններով. նա ոչինչ չէր խօսում, բայց նրա լռութիւնը շատ բան էր ասում։ Իսկ խեղճ մարդը ուզում էր խօսել երկար, յիշեցնել նրան ելիտասարդութեան բոլոր դէպքերը, և շատ-շատ բաներ, բայց զսպում էր իրան, և Թողնում էր, որ որ նա յիշի այդ ամենը։

—Ես տեսնում եմ, որ ձեր ծայնը ինձ ծանօթ է երևում, բայց չգիտեմ Թէ ով ես դու. լռութիւնը ընդհատելով խօսեց պարոնը։

—Ո՞վ եմ է՞ս... Զարմանալի է, որ չէք ճանաչում... տարիներով ապրել մի մարդի հետ և չճանաչել նրան... տարօրինակ է...

Պարոնը ցնցուեց. ծեռնափայտը դողում էր նրա ծեռքում։

—Այ, հիմի ասեմ Թէ ով եմ ես. ասաց Թշուառը և աւելի մօտեցաւ։—Ես նա եմ, որ տղատեցի քեզ խեղդուելուց, և Թոյլ չտուի զոհ դնալ ջրին...

—Ը՞... մռռաց պարոնը, երևի ուզում էր խօսել, բայց խօսքերը խեղդուեց կոկորդում։

—... ու դեռի եղերքից շալակեցի տարայ ձեր տուն։—Ես նա եմ, որ կերակրեցի քեզ եօթ-ութ ամիս շարունակ. բուժկել տուի երբ հիւանդ էիր։

—Օ՞, ազնիւ... դուրս թռաւ պարոնի բերանից։

—Ես նա եմ, որ ազատեցի քեզ սպանութիւնից, և քո վոխարէն վիրաւորուեցի աջ թևից, որի համար ծախեցի տունս, տեղս և ամեն ինչ. բայց չբուժուեց սա, կենդանութիւն չստացաւ. մնաց անշարժ ու չորացած... և այժմ տեսնում

Ե՞ս՝ ինչ եմ ես. ինչպէս դու ասում ես—մեռած։ Այո՛, մեռած եմ, բայց թաղուած չեմ։

Զգալի էր, որ ցաւը, սրտի մաղձը, կուտակուել էին նրա կրծքի տակ և այժմ դուրս էին ժայթքում խօսքերի անզսպելի հոսանքով։

—Ես, ես, եմ... կերկերաց պարոնի ձայնը.—իմ կեանքով քեզ եմ պարտական... ով իմ ազնիւ բարեկամ... Ով, ով կարող էր երեւակայել, որ այդ դու ես, իմ դժբաղդ ընկեր...

—Ոչ, ոչ ես մեռած եմ, բայց թաղուած չեմ. դեռ լսիր տրորուած ու աւերուած մարդի խօսքերը։—Դու եղել ես քաղցած, պէտք է լաւ իմանաս քաղցածի վիճակը... Ես քաղցած էի, քու կողովից վերցրի մի կտոր հաց, բայց դու այդ մի կտոր հացի համար՝ բռունցքներ ուտեցրիր և արիւնը բերանս լցրիր։ Ճիշտ է, դու ինձ չէիր ճանաչում և այդպէս վարուեցիր. եթէ ճանաչէիր, չէիր անի. բայց ինչո՞ւ այդպէս վարմունք ես բանեցնում խեղճերի վրայ. չէ որ դու էլ ես եղել նոյն վիճակում, նոյն օրում...

Պարոնը դողդողում էր. նրա շրթունքները ասես կպել էին իրար, ոչ մի բառ չէր կարողանում արտասանել. այլ ամօթահար, գլուխը կախ՝ լսում էր դատապարտեալի պէս։

—Երբ որ դու քաղցած էիր, վշտանում էիր մարդկանց վրայ և շարունակ կրկնում՝ «—Մարդկանց զգացմունքը բիրտ է։ Նրանք միայն իրանց համար են մտածում, էլ չեն նայում շուրջները վխտացող տառապեալներին ու քաղցածներին...» Եւ այդ խօսքերը ասում էիր դու. դու, որ կարող էիր ամեն գործ կատարել, որովհետև ունէիր առողջ մարմին և առողջ բազուկներ...Իսկ այժմ ո՞ւր են քո այն խօսքերը... Մոռացել ես, որովհետև փորդ կուշտ է, հօրդ մահից յետոյ ժառանգել ես նրա կարողութիւնը, պատկուել ես մեծ օժիտով աղջկայ հետ և կուշտ ես, միայն քո համար ես մտածում. էլ փոյթդ չէ՝ թէ շուրջդ լիքն են քաղցածներ ու սովատանջներ... Այո, այդպէս են մարդիկ. նեղ օրում դառնում են հրեշտակ և անդադար բարութիւնից ու խղճից խօսում. իսկ լէն օրում՝ դառնում են անխիղճ գազան. այդպէս էլ դու։

Փողոցներում անց ու դարձը դադարել էր և ամեն ինչ լռել։

—Օ՜, ազնիւ հոգի... հազիւ արտասանեց պարոնը և ուզեցաւ շարունակել՝ բայց ձայնը խեղդուեց կոկորդում։

—Այժմ տեսնում ես ինձ, թէ ինչ եմ. ցնցոտիներում թաղուած՝ մի փշրուած մարմին, մի ոսկրացած կմաղը, մի տառապող, սողացող արարած, մի հիւանդ ու վշտոտ հոգի... Դու այժմ լողում ես կեանքի ծովում՝ ինչպէս քո քէֆն է ուզում. իսկ ես՝ տանջուելով տառապում եմ, և քեզ պէս պարոններն էլ՝ հացի փող ուզելիս՝ մերժում են ու արհամարհում։ Ճիշտ ես նմանւում եմ այն անդեկ, ծւատուած առագաստներով նաւակին, որ մրրկուած ծովի երեսին՝ ալիքներն ու փոթորիկները քշում են դէպի կորուստ։ Այո, իմ առագաստները ծւատուած են և բաղուկներս, որ մի ժամանակ բրոնզի պէս էին, հիմա թուլացել են ու անզօրացել...

—Օ՜, ազնիւ ընկեր... իրան մոռացած հառաչեց պարոնը.— ես... երբէք... երբէք չէի կարող...

Թշուառականը երկար-երկար հազաց, թքեց. և վերջը դարձաւ պարոնին.

—Այս է իմ օրը, երջանիկ մարդ։

—Էլի սկսեց հազալ։

—Լսիր, ինչ եմ ասում, բաղդաւոր մարդ. նորից խօսեց խեղը։ —Որովհետև մի ժամանակ դու էլ եղել ես քաղցած, ուստի խրնդրում եմ, որ խեղճերի հետ այնպէս չվարուես, ինչպէս վարուեցիր ինձ հետ։ Եղիր բարի և բարի՝ ինչպէս ես բարի էի դէպի քեզ։

Պարոնը դողդողալով մօտեցաւ խեղճին և թողութիւն խնդրողի նման բռնեց նրա ձեռքը, նայեց նրա աչքերի մէջ և ասաց կամացուկ.

—Ինչո՞վ կարող եմ քեզ օգնել, իմ անբաղդ ընկեր. ասա ինձ։

—Ես օգնութեան կարօտ չեմ, ազնիւ պարոն։ Օգնութիւն ես ուզում անել, ինձ նման խեղճեր շատ կան, նրանց օգնիր... Այս քանի՞ տարի է անօթեւան ու կիսամերկ շրջում եմ աշխարհում, ոչ մի օգնութիւն չի եղել մարդկանցից և այժմ էլ չեմ սպասում, որովհետև, ինչպէս ասացի, իմ նաւակը դէպի կորուստ է գնում։

— Իմ խեղճ ընկեր, ինչու՞ ես մերժում օգնությունը։ Գրանանք մեզ մոտ։

— Շնորհակալ եմ... քեզ էլի ասում եմ, որ լինիս բարի և անես բարություն. որովհետև բարությունը ստեղծում է հոգու և խղճի խաղաղ դրություն... Ես միայն այսքանն էի ուզում քեզ ասել, ուրիշ ոչինչ. բռունցքների համար չեմ արանչում, որովհետև քեզանից ստացայ...

Նա շուռ եկաւ և քայլեց։ Պարոնը շշմած դրութեան մէջ՝ մնաց կանգնած միևնոյն տեղը։

Ասաղաղարդ պարզկայ գիշեր էր։

IV

Տանջուած մարդը հազալով ու թքոտելով շարունակեց քայլել։

Քայլելով հասաւ մի մեծ դարպասի ու կանգնեց. նայեց շուրջը՝ ոչ ոք չկար, միայն փողոցում, շատ հեռու մի ստուեր էր նշմարւում։—

— Անպատճառ ոստիկան կլինի. մտածեց մարդը ու մոտեցաւ նստեց դարպասի մօտի երկար նստարանի վրայ և մի անգամ խոր հառաչեց. քիչ յետոյ առողջ ձեռքը դնելով գլխատակը՝ մեկնուեց չոր տախտակի վրայ, ուզեց քնել, աչքերը խփեց, կրկին բաց արաւ. ցրտիցը քունը չէր տանում. խեղճի կիսամերկ մարմինը դողում, մրսում էր. նա ոտքերը քաշեց իրան, կուչ եկաւ, աչքերը խփեց ու մնաց արթուն։ Մի քանի անգամ բարձր ու երկար հազաց, և նորից աչքերը խփեց։

Հազոցի ձայնին եկաւ դռնապանը, կանգնեց խեղճի գլխաւերևը ու ձայն տուեց.

— Է՛յ, ո՞վ ես։

— Մարդը ոչինչ չխօսեց։

— Էյ, քեզ հետ եմ, բոթեց ծառան։— Հարցնում եմ, դու ո՞վ ես։

— Ես եմ. ասաց խեղճը թեք ընկած։

— Ո՞վ ես։

— Մարդ. նրանցից մէկը։

—Որոնցից մէկը։

—Ինչ նման միլլիոններից մէկը, ապո՛ւշ։

—Խելագար է... մրմռաց դռնապանը. ապա զայրացած բղաւեց։

—Հեռացիր այստեղից։

—Ինչի՞ հեռանամ, վնաս եմ տալիս. բարձրանալով խօսեց խեղճը։

—Դէ գնա, հեռացիր. պարոնը հիմա կդայ կլուբից։

—Է, թող դայ, ի՞նչ պիտի անի։

—Դիտե՞ս, մեր պարոնը հրամայել է կեղտոտ մարդկանց չթողնել հայեաթը. դէ հեռացիր քանի չի եկել, թէ չէ որ եկաւ ինչ պիտի հրամայի քեզ ծեծել, որ միւս անգամ չդաս էստեղ։

—Ո՞վ է քս պարոնը։

—Էս տների տէրը։

—Հաա՜. մարդ է։

—Բա ինչ է։

—Թքած դրա վրայ։

—Կորի, կորի. բարկացաւ դռնապանը.—էլ մի կանգնի։

—Մարդ է. մրմռալով քայլեց թշուառը,—հարուստ մարդ, և հրամայում է կեղտոտներին ծեծել...

Նա և՛ քայլում էր և՛ մտածում՝ մի տեղ գտնել գիշերելու համար, մի տեղ թաղցնել իր մերկ, վտիտ, ջարդուած մարմինը, և մի կերպ անցկացնել այս վատ, պարզկայ գիշերը. բայց քա նի՞ այսպիսի գիշերներ պիտի անցկացնի՝ մինչև գարունը, տաք եղանակները գան. և ինչո՞ւ անդարձ չեն անցնում այս դաժան օրերը... և ինչո՞ւ ինքը չի մեռնում ու միանգամից ազատւում այս անվերջ տառապանքից. միթէ մեռնելը լաւ չէ, այսքան տառապելուց... այո, հազար անգամ լաւ է... այսպէս մտածմունքով քայլելով՝ նա կանգնեց մի տակառի մօտ, մեծ շա քարի տակառ էր, խանութի առաջ անկուած... Տանջուած մարդը ձեռքը հանեց ծոցից, տակառը զգուշութեամբ վայր դրեց դետին. տակառի մէջ ծղնոտ կար. նա մի կողմ արեց այդ ծղնոտը ու սողաց ներս՝ մեկնուեց, յետոյ ոտքերը քաշեց իրան, ապա խոտը վրան ածեց՝ մէջքը ծածկեց ու լռեց։

Այժմ նրա մտքով անցնում էր անցեալ գիշերուայ դէպքը.— ինչպէս ինքը էն գիշեր մտաւ տակառի մէջ ու քնեց. խանութպանն էր թէ մի ուրիշ անողորմ մարդ նկատել էր՝ ոտքով խփելով տակառը գլորեց ու քրքջաց. և ինքը ինչպէս կէս քուն, կէս արթուն դրութեան մէջ բղաւելով դուրս պրծաւ տակառի միջից... այն գիշերն էլ այս գիշերուայ պէս պարզկայ չէր, մեղմ էր, այդ բոլորը մանրամասնաբար անցնում էր նրա մրտքով ու երկիւղ ծագեցնում նրա սրտում՝ թէ մի դուցէ այս գիշեր էլ նոյնը չպատահի՞. նա աչքերը խփեց, մարմինը աւելի կծկեց ու լուռ կացաւ։

Սառը քամի էր փչում ու ծիւնի փոշին դէս ու դէն ցրում. գետինը սառում էր, կարծրանում. տակառի ճեղքերից սողում էր ցուրտ քամին ու տանջուած մարդի բզկտուած մարմինը ծակոտում. նրա ատամները զարկւում էին իրար ու չխկչխկում. նա աւելի ու աւելի կծկւում էր կուչ գալի և ծղնոտին կպչում։

Մերկութիւնը, քաղցածութիւնը և երկիւղը աւելի ազդում էին նրա մրսելուն։

—Ո՜հ, անիծուիս կեանք, մրմնջաց նա,—լաւ է մեռնել, քան սոդալ քաղցած ու մերկ այս նզովուած աշխարհում...ո՜ւ... ո՜ւ... ո՜ւհ...

Հետզհետէ քամին ուժեղ բնաւորութիւն էր ստանում. թշուառականն էլ աւելի սղմում էր ատամները. բայց ի զո՜ւր. նրանք անդադար զարկւում էին իրար։ Վերջապէս նրա մարմինը անզգայացաւ. և մի ինչ որ թմրութիւն իջաւ վրան. բիբերը ծանրացան ու քնեց։

Քամին նււում էր ու լալիս այդ ցուրտ գիշերին. և այդ գիշերուայ ստոր դրկում՝ հանդստանում էր մի տանջուած մարմին, մի տառապող գլուխ, որ երկար տարիներ ցաւը շալակած քաշ էր տալիս իր թշուառ գոյութիւնը թշուառութեան ու անխղճութեան անծայր անապատի մէջ։

Սատղազարդ պարդ գիշեր էր։

V

Առաւօտեան խանութպանը, շատ վաղ բացեց խանութը և նկատեց, որ տակառը գլորուած է գետին. մօտ գնաց, ուզեցաւ ուղղել՝ տեսաւ մարդ կայ մէջը. իսկոյն ճանաչեց, որ անցեալ գիշերուայ մարդն է, զայրացաւ.

—Էյ, յիմար, վեր կաց. բղաւեց նա ու ոտքով հարուածեց։

Բայց մարդը անշարժ էր։

—Տօ, քեզ չեմ ասում, վերկաց է՛... և էլի մի քանի անգամ հարուածեց։

Նա չէ զարթնում, քնած է։

Խանութպանը տեսաւ որ չի երնում, տակառը գլորեց ու դարձաւ մօտը կանգնած հարևան խանութպանին.

—Տես, անցեալ գիշերուայ նման, ինչպէս հիմի ճղճղալով դուրս կփախչի բօչկի միջից։

Տակառը գլորուեց մի փոքր տեղ, ոչինչ չեղաւ։

—Մեռած կլինի. նկատեց հարևան խանութպանը ու մօտեցաւ բռնեց գլորուող տակառը։

—Ձ՛ասի՞, որ մեռած կլինի. ասաց նա ցաւալի ձայնով։

—Ուղի՛ղ, սարսափած բացականչեց խանութպանը և վազեց տակառի մօտ...

Այո, նա մեռած էր՝ տանջանքի կնիքը վրան։

Արևի առաջին շողերը ողջունեցին մարդիկ և կեանքը շարժուեց իր ամենօրեայ թափով...

Ս. ՐՕՖՖՕՐ

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Վերոյիշեալ նիւթի առթիւ Լոզաննի համալսարանի պրոֆ. Հերցէնը դասախօսութիւն է արել երիտասարդութեան, ուր շօշափելով մարդկանց սեռական կեանքի ամենահետաքրքիր հարցը, պախարակում է ծնողներին, որ նոքա իւր ժամանակին իրանց պարտքը չեն համարում զաւակներին տալ կարևոր ծանօթութիւն առհասարակ սեռական կեանքի մասին։ Այդ անւում է աւելորդ ամօթխածութիւնից, որը շատ թանգ է նստում զաւակների վերայ։ «Ճշմարիտ է և բարոյական այդ հայեցակէտը. բոլորովին ոչ»։ Ահա այդ ի նկատի ունենալով վերոյիշեալ պրոֆեսսորը կարդացել է վերին աստիճանի հետաքրքիր և ժամանակայարմար դասախօսութիւն, ուր յաջողել է ապացուցանել բարոյականութեան և գիտութեան մեծ դերը մարդկանց սեռական յարաբերութեան կենսական հարցի մէջ։ Այդ դասախօսութիւնը ֆրանսէրենից թարգմանուած է ռուսերէնի։ Ռուսերէն իմացողներին մենք խորհուրդ կը տանք այդ փոքրիկ գրքոյկը ամենայն լրջութեամբ և ուշադրութեամբ կարդալ, իսկ այդ լեզուն չիմացողներին մենք շատ կարևոր ենք համարում ընդարձակ ծանօթութիւն տալ նորա բովանդակութեան մասին։

Այս գրքոյկը երիտասարդներին է նուիրուած, որոնք չգիտենալով սեռական կեանքի շեղումների վտանգի մասին՝ հեշտութեամբ դառնում են առանց մտածելու վաղուց արմատացած սովորոյթի շնորհիւ՝ սեռական սանձարձակութեան զոհ... որովհետև ոչ ոք չի մտածում երիտասարդներին նիրշնչելու, թէ որոնք են իսկապէս և ինչպէս պիտի լինին այս յարաբերութիւնները—սեռական մարդկանց մէջ։ Ոչ ոք չի պարզաբանում այդ աւելի լայն, բարձր, ազնիւ, նշանակում է, աւելի ճշմարիտ տեսակէտից, քանի որ սեռական մերձեցումը մարդու համար պատահական և բոպէական երևոյթ չի, ինչպէս կենդանիների մօտ առանց որևիցէ ազդեցութեան թէ իւր և թէ միւսների ապագայի վերայ. մարդկանց համար այդ շատ կարևոր երևոյթ է, չուակէտ բազմաբարդ կապերի, երկարատև յարաբերութիւնների, անքակտելի կապակցութիւնների, որոնցից կախուած է բախտաւորութիւնը, թէ դժբախտութիւնը՝ թէ իրան և թէ շատ ուրիշ մարդկանց կեանքի...

Բայց ես կը ցանկայի յանձնարարել այս գրքոյկը և ծնողներին, որովհետև նորա վերայ է մեծ պարտականութիւն իրանց որդկերանց հեռու պահել գայթակղութիւններից, սխալմունքներից, յաճախ անուղղելի, եթէ նոքա թողնուում են անարգել նոցա շրջապատող հրապուրանքների մէջ։ Բայց ծնողները որպէսզի կարողանան առաջնորդել իրանց որդկերանց, պիտի իրանք նախ և առաջ սովորեն։

Յարգելի պրոֆ. առաջարկելով իւր գրքոյկը ծնողներին, խորհուրդ է տալիս ծանօթանալ նորա հետ և աստիճանաբար ծանօթացնել իրանց որդւոց ինչքան որ այդ կարելի է, որպէս զի ապագայում իրանց մեղաւոր չը համարեն, որ որդկերանց թոյլ են տուել աչքերը փակուած խորասուզուել սեռական յարաբերութիւնների անդունդը։

Ես շատ անգամ լսել եմ մի այնպիսի յիմար միտք, որ հարկաւոր չի հակառակել երիտասարդներին վատնել աւելորդ հիւթերը ամուսնութիւնից առաջ, որովհետև հակառակ դէպքում, նոքա չեն կարող դառնալ հաւատարիմ ամուսիններ։

Այդ աւելի քան յիմար առարկութիւնը միթէ հարկաւոր է հերքել, քանի որ նա՝ թէ տեսականապէս և թէ փորձնականապէս ոչ մի քննադատութեան չի կարող դիմանալ։

Իսկապէս ով ծանօթ է այն մարդկանց հետ, որոնք մինչև ամուսնանալը մաքուր և անարատ են մնացել, նա գիտէ, որ վերջինների համար անհաւատարմութիւնը ամուսնութիւնից յետոյ նոյնպէս զզուելի է, ինչպէս անառակութիւնը մինչև ամուսնութիւնը, որովհետև դա դաւաճանութիւն է սիրեցեալ ամուսնուն։ Հոգեկան պատկերը չի փոխուում ինչպէս շապիկ։

Շատ ծնողներ վախենալով գործել շտապողաբար զարթեցնելով իրենց երեխաների մէջ այնպիսի երևակայութիւններ, որոնք դեռ իրը ննջում են, միշտ ուշանում են. երեխայքը թէ տանը, թէ ուսումնարաններում, թէ ընկերների շրջաններում և թէ փչացած մարդկանցից արդէն իմանում են սեռական բաների և արատների մասին, և այսպիսով չարիքը արդէն տեղի է ունենում առանց ծնողների գիտութեան։ Եւ այդ բոլորը նորա համար, որ ծնողները իւր ժամանակին խուսափել են որդկերանց հետ ունենալ այդ յարաբերութիւնների մասին որևիցէ խօսակցութիւն։ Իսկ եթէ այդ անտեղի ամօթխածութիւնը թողնեն և ամեն ինչ պարզեն ինչպէս վայել է, այն ժամանակ շատ շատերը ազատուած կը լինեն այն աղէտներից՝ հոգեկան և մարմնական տանջանքներից, որոնք առաջանում են մարդկանց անառակ կեանքից, նոյնպէս այն տանջանքներից, որոնք խաբեբայութեամբ պատճառում են իրանց

կանանց, երեխաներին, որոնք ծնուում են ծանրաբեռնուած ժառանգական հիւանդութիւններով։

Այս է մօտաւորապէս պրոֆ. առաջաբանի իմաստը և նորա դասախօսութեան կէտ նպատակը։ Այս մի այնպիսի հարց է, որը աւելի քան կենսական է ամեն հասարակութեան համար, ապա ուրեմն անհրաժեշտ է ինչքան կարելի է աւելի և աւելի կրկնել վերոյիշեալ մտքերը։ Այժմ դառնանք գրքի բովանդակութեան, որից ամենագլխաւորները միայն պիտի բերենք մեր յօդուածի մէջ, բաց թողնելով աննշան բաները, որոնք դասախօսութեան մէջ սովորաբար շատ են լինում։

«Մարդ հասարակային էակ է. նա չի ապրում միայնակ. նորա ամեն մի խօսքը անդրադառնում է մերձաւորների վերայ, ունենալով նոցա վերայ ազդեցութիւն, թէ լաւ, թէ վատ, օգտաւէտ կամ վնասակար։ Նա պիտի ունենայ ի նկատի հասարակութիւնը և ձգտի կազմել յայտնի հաւասարակշռութիւն երկու հիմնական զգացմունքների մէջ, որոնք յատուկ են նորան և գտնուում են նորա բոլոր գործողութիւնների հիմունքներում. եսականութեան և այլասէրութեան—էգոիզմ և ալտրուիզմ։ Առաջինը ծագում է ինքնապահպանութեան բնազդից (սննդառութիւն). երկրորդը—ցեղի պահպանման բնազդից (բազմացում)։ Անհատական և սոցիալական վարուողութեան արհեստը,—բարոյականութիւնը այդ երկու ձգտումների ներդաշնակութեան մէջ է կայանում։

Նախ և առաջ բարոյականութիւնը ամեն մարդի համար նորանում է, որ նա միշտ և ամեն տեղ անպատճառ գործէ համաձայն իւր ներքին համոզմունքներին, ինչպէս պահանջում է նորա խիղճը։

Բայց որովհետև անհատական խիղճը միատեսակ չէ և նա կարօտ է կորեկտիվի—ուղղիչի, որը կարող է լինել հասարակային խիղճը, վասնորոյ բարոյականութիւնը պիտի կայանայ նորանում, որ մարդ ամեն տեղ միշտ ինչ որ լինելու լինի, պիտի գործէ համաձայն պահանջներին ամենամեծ բարիքի մերձաւորների և ամբողջ հասարակութեան»։

Բայց հասարակական խիղճը չի կարելի համարել անսխալական, քանի որ նա դարերի ժամանակներում թոյլ է տուել գործել զզուելի բաներ. մարդակերութիւն, մարդաղոհաբերութիւն, ստրկութիւն, կրօնական հալածանք... միջազգային սպանութիւններ, պատերազմ, թէև այժմ ասաիճանաբար այդ բաներից շատերը թողել են և պիտի թողնուեն լուսաւորութեան ընդհանուր գործօնների շնորհիւ։

Բայց և այնպէս գոնեա լուսաւորեալ երկրների համար ին-

կական բարոյական վարմունք կարելի է համարել այն, որը ընդունելի է իբրև ընդհանուր կանոն վարուողութեան, որին պիտ հետևի ամեն մէկ նորմալ, զարգացած մարդ, որը զերծ է հոգեկան և բարոյական խեղաթիւրումից, թէ ժառանգական և թէ ստացական։

Ահա այդ երեք սկզբունքները պիտի ընդունենք սեռական յարաբերութեան շրջանում, եթէ մարդ ցանկանում է պատուաւոր անուն կրել։ Բոլոր կենդանական և բուսական աշխարհը ապրում է սննդառութեան և բազմացման պայմանների ներքոյ։

Բազմացումը էապէս չի զանազանւում սննդառութիւնից— նա շարունակութիւն է վերջինին։ Դեռահաս անհատը աճում է շնորհիւ սննդառութեան, իսկ երբ նա հասունանում է, այն ժամանակ արտաթորում է յայտնի մասնիկներ, որոնք ծառայում են բազմացման նպատակին և այդպիսով շարունակւում է ցեղը»։

Ցարգելի պրոֆ. երկար կանգնում է առհասարակ բազմացման վերայ՝ սկսելով ամենաստոր կենդանիներից, որոնք բազմանում են բաժանմամբ—մէկ վանդակից գոյանում է երկու, նոցա մօտ չկայ սեռական զանազանութիւն ստորին ողնաշար ունեցողների մօտ, օրինակ՝ ձկների, գորտերի և այլն էգը ածում է սերմը— խաւիարը, իսկ որձը թափում է նորա վերայ իւր սերմը և այդպիսով բեղմնաւորումը լինում է արտաքոյ ծնողների։ Թռչունների և սողունների—օձի, խլեզի և այլն, մօտ բեղմնաւորումը լինում է էգի մարմնի մէջ, նշանակում է հաղորդակցութեամբ որձի էգի հետ և սաղմը ձուի մէջ դուրս է գալիս արտաքուստ, երբ նա— ձուն ենթարկւում է ջերմութեան՝ արեգակի մօտ կամ արհեստական, այն ժամանակ զարգանում է սաղմը, որը կերակրւում է ձուի մէջ պատրաստի սնունդով, հասունանում է և դուրս գալիս ձուից։ Կաթնակերների մօտ այդ բոլորը արդէն տեղի է ունենում մօր արգանդում, ուր սաղմը սնունդ է ստանում մօր արիւնից, իսկ երբ ծնւում է, այն ժամանակ էլի մօրից—նորա կաթից։ Երբ կենդանին հասնում է կատարեալ զարգացման, այն ժամանակ նորա սեռական գործարանները ևս զարգանում են և միայն այդ ժամանակ երևում է սեռական պահանջ, որը աւելի է զարգացած որձերի մօտ։ Ահա ինչու նոքա, երբ երևում է այդ պահանջը, հետապնդում են էգերին, տիրում նորանց և ստիպում են հաղորդակցուել։ Առհասարակ բոլոր կենդանիների մօտ սեռական ձգտումը աւելի զօրեղ է որձերի մօտ։ Այդ ֆիզիքական և միևնոյն ժամանակ հոգեկան զանազանող—զատիչ բնաւորութիւնը նշմարւում է կանանց երկչոտութեան, զգաստութեան, բնածին ամօթխածութեան մէջ և հրապուրողը միշտ լինում է տղամարդը։

Այս է բնախօսական հիմքը, որի վերայ ծագում է սեռական բարոյականութեան հարցը։ Պիտի այստեղ նկատել և մէկ բնորոշ երևոյթ, կենդանիները մինչև կատարեալ հասունութիւնը սեռական պահանջ չեն զգում, նոքա զարգանում են բնական ճանապարհով, իսկ մարդը շնորհիւ լեզուի ընդունակութեան դեռ երեխայ ժամանակից մեծերից և ընկերներից անժամանակ ստանում է սեռական պահանջ, ձգտում, որը շատ վատ է ազդում նոցա կազմուածքի վերայ, քանի որ վերջինը դեռ չի հասունացած կատարելապէս։

Այդ վնասակարութիւնը գիտութիւնը բացատրում է հետեւեալ կերպիւ։

Վերջերս ֆիզիոլոգիայի՝ բնախօսութեան մէջ ծագել է նոր շրջան ներքին արտաթորումների։

Մեր կազմուածքի մէջ կան երկու տեսակ գեղձեր, որոնցից մէկ քանիսները արտաթորում են յայտնի հիւթեր, օրինակ թքագեղձը—թուք, լեարդ—լեղի, երիկամունքները մէզ, ստամոքսագեղձերը,-ստամոքսի հիւթ, ձուանները սերմ և այլն. իսկ կան գեղձեր, որոնց հիւթը մտնում է արեան մէջ, այսինքն մնում է կազմուածքի մէջ, օրինակ փայծաղը, վահանաձև գեղձը։

Այդ ներքին արտաթորութիւնները ունին մեծ ազդեցութիւն կազմուածքի քիմիական ամբողջ սննդառութեան արարողութեան վերայ։ Տեղամարդի ամորձիքը ժամանակ ժամանակ արտաթորում են սերմ սեռական յարաբերութեան ժամանակ ցեղի շարունակութեան համար, բայց նոքա ունին և ներքին արտաթորութիւն, որը աջակցում է կազմուածքի սննդառութեան, մանաւանդ ջղային սիստեմի, գլխի և մէջքի ուղեղի։ Այժմ հասկանալի է, թէ ինչու եթէ անչափահաս երիտասարդը անժամանակ սերմի արտաթորութիւն է ունենում, նոքա կազմուածքը զրկուելով վերոյիշեալ կարևոր ներքին արտաթորութիւնից, թուլանում է, չի հասնում իւր բնական զարգացման և ամորձիքը՝ կամաւոր և անբնական գրգռումներից, երբ նոքա դեռ չեն հասած ֆունկցիոնալական հասունութեան, թուլանում են և այդ պատճառաւ տալիս են թոյլ և վատ արտադրութիւն, որից գոյանում է թոյլ սաղմ և դրանից տուժում է սերունդը։ Ահա պատճառը աղէտալից հետեւանքների ոչ միայն չարագործութեան, այլ հասարակ գործադրութեան սեռական գործարանների այն ժամանակ, երբ ոչ նոքա, ոչ ամբողջ կազմուածքը դեռ չեն հասել կատարեալ հասունութեան։

Այդ հանգամանքի վերայ թէ ծնողները, թէ մեծերը, թէ դաստիարակները պիտի շատ մեծ ուշադրութիւն դարձնեն և վաղօրօք

զգուշացնեն երեխաներին սիրողաբար, լրջօրէն հասկացնելով բանի էութիւնը։ Մեր երկրներում, մեր կլիմայում մարդ կատարեալ հասունութեան կարող է հասնել 20—22 տարեկան հասակում, ուրեմն դորանից առաջ նա չպիտի սեռական յարաբերութիւն ունենայ, իսկ եթէ նա զանց է առնում այդ, նա առաջինը վնասում է իրան. երկրորդ՝ տալով թոյլ սերունդ, մեղանչում է թէ իւր առաջ և թէ հայրենիքի՝ իւր թոյլ սերունդ տալու պատճառով։

Իսկ երբ հասաւ տղամարդը, ինչ պիտի անէ. նա չի կարողանալ կենդանիների կամ վայրենիների նման ամեն մէկ պատահող կնոջ բռնաբարել։ Նա կամ պիտի ամուսնանայ անարատ մնալով մինչև այդ ժամանակը, կամ պիտի սեռական յարաբերութիւն ունենայ, կամ պիտի ժուժկալէ. «Գալով ժուժկալութեան, ես պիտի ասեմ, որ նա ոչ մի վնասակար ազդեցութիւն չունի մարդու վերայ, ինչպէս հաւատացնում են շատերը, մինչև անգամ բժիշկներից։ Դա մեծ սխալմունք է և անհիմն ենթադրութիւն առանց գիտական որևիցէ հիմունքի։ Ով ոք ունի բարի կամք, կարելի է չափաւորել սեռական ձգտումը. դորա համար հարկաւոր է հասարակ կերակուր, խուսափում գրգռիչ ըմպելիքներից, լուրջ մտաւոր աշխատանք և մանաւանդ ֆիզիքական վարժողութիւններ և աշխատութիւն։

Բայց ի հարկէ այդ այնքան էլ հեշտ չի գործադրել, որովհետև մարդկանց մեծամասնութիւնը կրթուած է մի այնպիսի մթնոլորտում, ուր սեռական սանձարձակութիւնը համարւում է ներելի և օրինական։ Դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ կրկնակի ատավիզմ—ժառանգութիւն վայրենի ժամանակների և միջին դարերի։

Առաջներում տղամարդը յարձակւում էր կնոջ վերայ, ինչպէս գազան. բայց այդ վայրենութիւնը աստիճանաբար թուլանում էր, թէև երկար ժամանակ տղամարդը տէր էր, ճնշում էր, ստրկացնում էր. ինչպէս կամենում էր, նայելով նորա վերայ, իբրև տնային գրաստի վերայ։

Միջին դարում կանանց դրութիւնը, ինչպէս և հասարակ ժողովրդինը՝ վատթար էր. իշխում էր միայն ազնուական դասակարգը, որը թոյլ էր տալիս ամեն տեսակ սանձարձակութիւն դէպի կանանց դասը հասարակ ժողովրդի։ Այժմ ևս ովքեր են դառնում զոհեր մեր երիտասարդներին. հասարակ ժողովրդի աղջիկները, աղախիններ, և այլն, որոնց հետ թոյլատրւում է ամեն ինչ՝ առանց համարեա խղճահարութեան վերոյիշեալ ատավիզմի շնորհիւ։

Ենթադրենք, որ երիտասարդ տղամարդը զզւում է անառակ կանանցից. ապա ինչ պիտի անէ։ Նա պիտի խաբեբայութեամբ սեռական յարաբերութիւն ունենայ պատուաւոր աղջկերանց հետ,

որոնք դառնալով սիրական, պիտի արտաքսուեն հասարակութիւնից. իսկ եթէ յղանայ, այն ժամանակ աւելի ևս սև օրեր պիտի տեսնեն այդ խեղճերը, նրանք կամ պիտի ծնեն ծածուկ տեղերում կամ վիժեն, և կամ իրանց կամ երեխաներին սպանեն, իսկ եթէ լինի երեխայ, հարկաւոր է նորան կերակրել և ինչով—դիմելով երբեմն անառակութեան։ Բայց միթէ նա իրան երեխային է միայն կերակրում. Ձեր երեխային, որովհետև դուք-էք նորան աշխարհ հանել, թողել և մոռացել։ Ինչ պիտի դուրս գայ այդ ալօրինի երեխաներից յանցաւորներ, արբեցողներ։ Նշանակում է դուք դառնումէք մասնակից յանցանքների և անառակութեան տարածման։

Եւ այդպէս տղամարդը երկու էակների դժբաղտութեան պատճառ է դառնում. իւր երեխային և նորա մօր, նոյնպէս այն կնոջ, որի հետ կապւում է օրինաւոր ամուսնութեամբ և վերջինից ծնուած երեխաներին։

Ենթադրենք, որ երիտասարդը այդ ի նկատի առնելով կը վճռէ յաճախել անառակութեան տները, ուր նորան սպասում է մի ուրիշ աւելի վտանգաւոր բան՝ վեներական հիւանդութիւններից վարակում, օրինակ շանկրից, սուսունակից և սիֆիլիսից։

Թէև սուսունակը տեղական հիւանդութիւն է համարւում, բայց երբեմն նա տարածւում է զանազան գործարանների վերայ և ունենում է թէ տղամարդի, թէ իւր կնոջ և թէ երեխաների վերայ շատ աղէտալի հետևանք, ինչպէս սիֆիլիսը։

Տղամարդի համար. սուսունակով համարեա բոլոր տղամարդիկ հիւանդացած են լինում, համարելով նորան մի անվտանգ տեղական հիւանդութիւն, բայց իրականապէս այդպէս չէ. այդ հիւանդութիւնը առաջինը՝ շատ յամառ բնութիւն ունի, տևում է շատ երկար. երկրորդ՝ ունենում է շատ վտանգաւոր բարդութիւններ. միզանցքի նեղացում նորա կից և մօտ գեղձերի, ձուաների, միզապարկի, մինչև անգամ երիկամունքի բորբոքում, յօդացաւ, յաճախ սերմնահոսութիւն, որը այնքան աղէտալի է լինում ջղային համակարգութեան համար, ինչպէս ամեն տեսակ սերմի կորուստ, մանաւանդ օնանիզմի ամենասոսկալի սովորութեան ժամանակ. բացի դորանից սերմի գլխաւոր մասերը՝ սերմնային մարմնիկները կամ ոչնչանում են, կամ թուլանում դառնալով անընդունակ բեղմնաւորութեան համար և այդպիսով մարդս դառնում է անպտուղ, որի մէջ մեղադրում է անիրաւաբար իւր կնոջ, որից պահանջում է անպատճառ զաւակ։

Սուսունակը կանանց համար նոյնպէս աղէտալի է։ Գլխաւորապէս վարակւում են ամուսիններից, որոնք հիմնաւորապէս

մինչև ամուսնանալը չեն բժշկուել, թեթևամտութեամբ նայելով այդ հիւանդութեան վերայ։ Կանանց մօտ բացի տեղական բորբոքումից լինում են բարդութիւններ արգանդի, ձուարանների, ֆալլոպեան խողովակների, որի միջոցաւ կնոջ ձուն մտնում է արգանդը, նոցա նեղացումը, որը պատճառ է դառնում յաճախ անպտղութեան և արտաքոյ արգանդի վտանգաւոր յղութեան և այլն։ Անպտղութեան պատճառը նոյնպէս դառնում է ամուսինը, վարակելով իւր կնոջ։

Սուսունակը երեխայոց համար նոյնպէս առանց վտանգի չի անցնում։ Աղջիկ մանուկները ծնուելու ժամանակ վարակւում են մօրից ստանալով թէ սեռական գործարանների բորբոքում և թէ աչքերի, եթէ հարկաւոր նախազգուշութիւններ չը ձեռնարկւն։ Երկու սեռի մանուկները շատ յաճախ ստանում են աչքերի բորբոքում սուսունակից և կուրութեան մեծամասնութիւնը երեխայոց այդ պատճառից է լինում։

Այժմ դառնանք վենեբական հիւանդութիւնների ամենավտանգաւորին—սիֆիլիսին, որը վարակիչ է վերին աստիճանի և փոխանցւում է զանազան ճանապարհներով, բացի սեռական յարաբերութիւններից՝ համբոյրից, ձեռք տալով, ամանից, թուքից և այլն։

Մի քանի օրինակներ վարակման անսովոր միջոցներով. մի երիտասարդ ունենալով պզուկ քունքի վերայ՝ կառքում քնի ժամանակ այդ տեղով դիպչում է այն տեղին, որ տեղին առաջուց դիպած է լինում սիֆիլիս ունեցողի խոցը։ Միւսը ստանում է աչքի մէջ սիֆիլիսոտի թուքից, որից փչանում է աչքը և ամբողջ կազմուածքը վարակում։ Կան դէպքեր, երբ սիֆիլիսոտը ձեռքը սեղմելուց յետոյ մատը տանելով քթի մէջ վարակւել են սիֆիլիսով քթից։ Ահա ինչ աննկատելի անմեղ ճանապարհներով անմեղ մարդիկ վտանգւում են սիֆիլիսից վարակուելով. և այդ բաւական չէ, որ ոչ մի արմատական միջոց չի ձեռնարկւում այդ սարսափելի ախտի տարածման դէմ, այլ և պահանջւում է, որ բժիշկները պահեն «պրոֆեսսիոնալ գաղտնիք», ասել է թէ չը յայտնեն որևիցէ անձի սիֆիլիս ունենալու մասին։ Մինչ նոքա պարտաւոր են օրէնքով ամեն տեսակ վարակիչ հիւանդութեան մասին յայտնելու իշխանութեան, օրինակ ծաղկախտի, կարմրուկի, տիֆի և այլն. իսկ ամենասարսափելի հիւանդութեան մասին թէ անհատի, թէ հասարակութեան, թէ մարդկութեան համար, պիտի լռեն։ Դա մի անհեթեթութիւն է և անհասկանալի տրամաբանութիւն։ Այդ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մէկը բազմաթիւ օրինակներից՝ հովանաւորութիւն տղամարդկանց արատներին վերջինների միջոցաւ»։

Յարգելի պրոֆ. բերում է մէկ զարհուրելի օրինակ վարակման երեք ընտանիքի. և դորա պատճառն այն է եղել, որ փեսայու երիտասարդը համբոյրի միջոցաւ վարակել է 19 տարեկան աղջկան—նշանածին (Засѣд. Берлин. Мед. общ. докторъ Гебертъ 1889 г.)

Հռչակաւոր սիֆիլիտոլոգ Ֆուրնիէն պատմում է, որ տեսել է շատ դէպքեր, երբ վարակումը սիֆիլիսով եղել է մանաւանդ համբոյրների միջոցաւ։ Պրոֆ. Հերցենը յետոյ խօսելով սիֆիլիսի վարակաւորութեան մասին յայտնում է, որ նա անբուժելի է, բայց կան շատ բժիշկներ, որոնք գիտնականօրէն ապացուցել են հակառակը սիֆիլիսի բուժելի լինելը։

Աւելի սարսափելի է ըստ Հերցենի սիֆիլիսի ժառանգականութիւնը։ «Բաւական է, եթէ ծնողներից մէկը հիւանդ է սիֆիլիսով—երեխայքը պիտի ծնուեն սիֆիլիսոտ. այստեղ դլխաւորապէս հայրն է լինում մեղաւորը։ Կան մարդիկ, որոնք զզուելի ոճիր են գործում ամուսնանալով սիֆիլիսի բացարձակ նշաններ ունենալով իրանց վերայ, ուրիշները աւելի ոճրագործ են լինում, վարակուելով ամուսնութիւնից յետոյ...

Դժբաղտաբար մարդիկ, որոնք թոյլ են տուել ինչ որ կար և լի էր մինչև ամուսնանալը, շարունակում են նոյնը և ամուսնութիւնից յետոյ....

Ժառանգականութիւնը լինում է թէ հօր և թէ մօր կողմից։ Երեխան ունենալով այդ ժառանգականութիւնը, փչանում է յաճախ մօր արգանդում կամ ծնուելու ժամանակ, իսկ եթէ մնում է կենդանի, վաղ թէ ուշ արտայայտւում է նորա վերայ սիֆիլիսը։... Դորանից է ծագում այն բազմաթիւ ողբերգութիւնները, որոնք տեղի են ունենում ընտանեկան շրջաններում։ Ահա մէկ օրինակ։ Մէկ ընտանիքում երկու որդիքը 12 և 13 տարեկան, հօրից ժառանգած սիֆիլիսից տանջուելուց յետոյ, մեծը վախճանւում է, իսկ երկրորդի տանջանքը աւելի ևս սաստկանում է։ Մայրը չը կարողանալով տանել այդ տանջանքը ինքնասպանութիւն է գործում։

Բժիշկ Ռեժիս (Regis) հրատարակել է մի նոր հետազօտութիւն, ուր ապացուցանում է, որ երեխայոց ընդհանուր անդամալուծութեան համարեա բոլորի պատճառը ժառանգական սիֆիլիսն է (Mercred, médical 1895)։

Էլի դառնանք սիֆիլիսի վարակաւորութեան։ Մայրը եթէ խուսափէ իւր ամուսնուց վարակուելուց, նա կարող է վարակուել երեխայից, որին նա կերակրում է։ իսկ եթէ մօր տեղ սննդատուն կերակրէ, վերջինը պիտի վարակուի, մանաւանդ, որ բժի

կը՝ պահպանելով իւր պրոֆեսսիոնալ գաղտնիքը, չի զգուշացնիլ նորան, թէ ինչ երկիւղ է նորան սպառնում, որովհետև դա կարող է անպատուել «ընտանիքի յարգելի հօրը» և պատճառել անպատուութիւն իրան՝ բժշկին։ Սննդատուն վերադառնալով իւր տունը վարակում է ամուսնուն, երեխայոց, վերջիններին իրանց ընկերներին՝ թէ խաղի ժամանակ, թէ ուսումնարանում։ Եւ այդպիսով ամբողջ գիւղորայք վարակւում են սիֆիլիսով։

Այդ երևոյթը մանաւանդ նկատւում է Ֆրանսիայում և Ռուսաստանում և սիֆիլիսը այդպէս տարածուելով դառնում է ազգային մեծ աղէտ մեր ցեղի համար, վասնորոյ հարկաւոր է արմատական միջոցների համար մտածել։

Այդ այն կը լինի, որ այն օրէնքը, որը գործադրւում է ուրիշ վարակիչ հիւանդութիւնների մասին, որոնք սպառնում են հասարակութեան առողջութեան, գործադրուին և վեներական հիւանդութիւնների դէմ, այսինքն՝ պարտաւորեալ առանձնացում և բժշկութիւն բոլոր այդ տեսակ հիւանդներին առանց զանազանութեան սեռի։

Եթէ պարտաւորիչ է անառակութեամբ պարապող կանանց ենթարկել քննութեան և բժշկութեան, նոյնը պիտի անել և անառականոց յաճախող մարդկանց հետ... Նոյնպէս հարկաւոր է ադառակ կանանց, եթէ հիւանդ են առանձնացնել և հիմնաւորապէս բժշկել... Հարկաւոր է անել, ինչ որ գործադրւում է Շվեցիայում, որի մասին կը խօսենք յետոյ։

Եւ կարծում եմ, որ լուսաւորութիւնը աստիճանաբար յաղթում է այն երկու ատավիզմը, որի մասին խօսեցինք առաջ։

Արդարութիւնը և ազնուութիւնը սկսում է թափանցել և սեռական յարաբերութեան շրջանը, ինչպէս թափանցում է բոլոր մարդկային յարաբերութիւնների մէջ—սոցիալական, քաղաքական և միջազգային։

Այժմ դուք գիտէք, որ մարդկանց անառակութիւնը պատճառում է մեր մերձաւորին, հայրենիքին, մարդկութեան չարիք, որի չափը և խորութիւնը դժուար է որոշել...

Դասախօսութիւնը յարգելի պրոֆ. վերջացնում է յետագայ խօսքերով։

«Բարոզեցէք ձեր սեփհական օրինակով. պատուիր կնոջդ, քրոջդ, մերձաւորիդ աղջկան, ինչպէս որ դու ցանկանում ես, որ ուրիշները անեն միևնոյնը քեզ հետ»...

Գրքոյկի վերջում աւելացրած են երեք նկատողութիւններ. առաջինը վերաբերում է նորան, որ աղջկայ հասակն ամուսնութեան համար պիտի որոշած 20 տարեկան, որովհետև այդ հասա-

կումն է նա զարգացած համարուում, միայն Զուիցերիայում և Միացեալ Ամերիկայում ընդունուում է աղջկայ հասակը 18—21 տարին։ Երկրորդ՝ Զուիցարիայում չկայ օրէնք բժշկական պրոֆեսիոնալ գաղտնիքի, ինչպէս միւս երկրներում, ուրեմն նոքա չը պիտի թագցնեն թէ վեներական, և թէ միւս վարակիչ հիւանդութիւններ ունեցողներին։ Երրորդ՝ Շվեցիայում վեներական ախտերը աւելի նուազ են տարածուած, քան միւս երկրներում։ Այնտեղ նշանակուած է առանձին հարկ բացառապէս վեներական ախտ ունեցողների համար, որոնք բժշկուում են ձրի։ Տեղական իշխանութիւնները կարող են, երբ հարկաւոր համարեն, ամբողջ ազգաբնակութեան քննութեան ենթարկել բժիշկների միջոցաւ և երբ գտնուում են հիւանդներ, իսկոյն ուղարկում են մերձակայ հիւանդանոցը։ Երբ այդ հիւանդները վերադառնում են տուն, այնուհետև տեղական իշխանութիւնները ժամանակ ժամանակ պիտի տեղեկանան նոցա առողջութեան մասին, որպէսզի հարկաւոր դէպքում՝ եթէ երևան սիֆիլիսի նշաններ, բժշկութեան համար հոգան։ Ամեն բժիշկ պիտի իմանայ իւր հիւանդների վարակման աղբիւրի մասին, որպէս զի կասկածաւոր անձին ենթարկէ բժշկական քննութեան. իսկ եթէ մի ոք խուսափէ, նորան ստիպմամբ կենթարկեն յիշեալ քննութեան։

Նորակոչ զինուորները, նոյնպէս և զինուորները, մանաւորապէս—մարզողութիւններից առաջ ենթարկուում են քննութեան, նոյնը անուում է եկեղեցիների, շաբաթուոր առևտրականների, որոնք ժողովուում են շուկաներում։ Ծովեզրեայ իշխանութիւնները պիտի հսկեն նաւաստիների վերայ, ենթարկեն քննութեան։ Քննուում են նոյնպէս սընդատուները և երեխաները, որոնք ապաստարաններից տրուում են մասնաւոր անձանց պահելու։ Ահա շնորհիւ վերոյիշեալ միջոցների վենեբական հիւանդութիւնները շատ սակաւ են Շվեցիայում։

«Ես երբէք չեմ լսել, ասում է բժ. Բիբինգը, որ մեծամասնութիւնը համարէ այդ միջոցները ամօթաբեր կամ անպատեհ անհատի ազատութեան. իսկ նոքա, որոնք վարակուել են առանց իրանց մեղաւորութեան, նրանք ընդհակառակը, շնորհակալ են իշխանութիւնից վերոյիշեալ միջոցների համար»։

Փոքր և պատիւ Շվեցիային։

Սորանով է վերջանում հետաքրքիր գրքոյկը պրոֆ. Հերցենի, որը ռուսերէն լեզուով դուրս է եկել 1905 թուականին։

ԲԺ. Բ. ԱՂԱՍԱՐԵԱՆ

ԺՈՂՈՎՐԴԻ ՄԷՋ[1])

ՐՕԶԵԳԵՐԻ

Քսանեւհինգերորդ կիրակի

Անցած հինգշաբթի Հոյղենդորֆում տօնեցինք այսպէս կոչուած կուսական, կամ պսակների տօնը, թնդանօթներին փոխարինող ռմբիկների թնդիւններով մի գնացք էր սա։

Նոյնիսկ վառօդն էլ այստեղ աղօթքներ է առաքում դէպի երկինք, թողութիւն խնդրելով իր՝ աշխարհի վրայ կատարած անկարգութիւնների համար։ Եթէ «Կոնտինենտալ փոսաի» աշխատակիցները տեսնէին ինձ առանց գլխարկի գիւղացիներին հետեւելիս և նրանց հետ երգելիս, կ՚բացականչէին՝ ի՞նչ չի անի մարդ քսան հազար կրօն ստանալու համար։ Բայց այժմ հեռացել եմ նրանցից և լիայոյս եմ որ ընդմիշտ։ Աշխատանքը և չարչարանքը կապեցին ինձ գիւղական կեանքի հետ։ Վաղուց արդէն նկատել էի, որ ուրախութիւնը և դուարճութիւնը մարդկանց անջատում է իրարից, իսկ տանջանքը՝ միացնում։ Մարդիկ միաւորւում և հոգեպէս յարում են իրար միայն այն ժամանակ, երբ արիւնակից վէրքերն են կապում նրանց։ Որտեղ վիշտն է, այնտեղ դիւրութեամբ սկիզբ են առնում հաւատը և սէրը։

Նա, ով ինքը անձամբ մշակել է դաշտը, ըմբռնում է երկրային պտուղների պահպանութեան և կայծակն ու վատ եղանակը իրանցից հեռացնելու մասին աղօթքները։ Երբ այդքան կենդանի արարածներ միացած որևէ բան փափաղում, դէպի մի որևէ բան ձգտում, նոր ոյժ է առաջանում և նրանց ցանկութիւնները իրագործւում են։ Մի բանանտեղծ գրել է.— այն րոպէին, երբ բոլոր կենդանի արարածները միաժամանակ

1) Լումայ 1909 № 9

լրջորէն ցանանային գոյութիւն չունենալ, աշխարհը կ'կործանուէր... եթէ ընդհանուր համաձայնութեամբ հնարաւոր է վերացնել աշխարհը, ուրեմն նոյն ընդհանուր ցանկութեամբ կարելի է հաստատել այն։ Ես բարձր եմ դասում մարդկանց միաբանութիւնը սիրոյ, ատելութեան, ծգտումների մէջ։ Այդ միաբանութիւնից է կախուած գուցէ և բաղդի կառավարութիւնը։

Թափորի ժամանակ երիտասարդները, ի հարկէ, անծնաւոր էին լինում և այլ մտքերի, բացի կարմիր ամպհովանուց, որի տակ առաջ էր ընթանում քահանան ս. մասունքներով, բացի լապտերներից և խաչվառներից ամենքն էլ (որոնց թւում և ես մեղաւորս) տեսնում էին իրանց առաջ սպիտակ զգեստներով և լեռնապսակի ճիւղերը դլխին աղջիկների երկար շարքը։ Լեռնապսակի ճիւղը կուսական անարատութիւն է նշանակում այս կողմերը։ Այդ կարգը կատարւում է տարեկան մէկ անգամ ստուածային մարմնի ծնի օրը։ Բոլոր աղջիկները մեծ թէ փոքր, գեղեցիկ թէ տգեղ բոլորեքեան իրանց դլուխները զարդարում են լեռնապսակի ճիւղերով։

Ոմանք չքաւորութեան պատճառով անկարող են լինում սպիտակ զգեստ ունենալ, սակայն դրանց լեռնապսակի ճիւղը աւելի պերճախօս է լինում ուրիշներից։ Երիտասարդները, դիտենալով որ շատ թէ քիչ կարելի է հաւատ ընծայել սովորութիւններին, ուշադրութեամբ դիտում էին այդ գեղեցիկ դէմքերը։ Այս ծնին իր դլուխը հպարտութեամբ ճիւղերով զարդարած աղջիկը, ոչ միայն բարձր է կանգնած հասարակութեան աչքին, այլ և մի տեսակ անհասանելի է լինում։ Պատմում են, որ մի անգամ, գաղտնի կերպով մեղանչող աղջիկ, ծնին լեռնապսակի ճիւղ է անցնում դլխին, բայց ժամերգութեան լեռնապսակը եղինջի է փոխւում և դժբաղդի դլխին այնպէս աճում, մեծանում, որ բոլոր եկեղեցականներին տեսանելի է լինում։

— Ինչո՞ւ մի այդ տեսակ սովորութիւն չկայ տղաների համար, հարցրի ես հանաքով Բոխերլից։ Նա մտախոհութեամբ նայեց վրաս և ասաց որ չիմար հարցեր չառաջարկեմ իրան։ Ի՞նչ է նշանակում, փիլիսոփայ։

Թափորի ժամանակ երիտասարդները ծիծաղելով և քրը-

քրջալով մէկ-մէկ թու�էին աղջիկներին։ «Ո՞րտեղ է Ադամի աղջիկը», հարցրեց մինը. «Տէր Աստուած, նա չի երևում», «Այ քեզ բան»։

Իսկ յետոյ ասնը ինչ պատահեց։ Ադամը, ժամից վերադառնալուց յետ, մտաւ խրճիթը, որտեղ Բարբելը ծալում էր ծեռքի կարը։

—Այսօր քեզ համար հատարակ օ՞ր է, Բարբել. հարցրեց հայրը։

—Հատարակ օրին չեմ հասցնում կարել։

—Ես կարծում էի տկար ես, որ այսպիսի մի օր ժամ չէիր եկել։

Աղջիկը ծգծգում էր ծեռին բռնած թելը, բայց յետոյ հանդարտութեամբ ասաց.

—Հայր, ես գլուխ զարդարելու ոչինչ չունէի, յիմար ոչխարը երեկ մտաւ պարտէզը և կերաւ իմ լեռնապսակը։

—Դու էլ ի՞նչ էիր շինում, զաւակս, ասաց Ադամը և մտաւ այդին։ Ճիշտ որ այնպէս էր՝ լեռնապսակի ցողունները կոտրատուել, ծաղիկները թառամել էին։

Շուտով աղջկայ մօտ եկաւ մայրը։ Ես կանգնած էի սրտոում։ Պառաւը խօսում էր հանդարտօրէն, սակայն պէտք էր դիտենալ թէ ինչ էին նշանակում նրա ոսկրոտ, արևակէզ ծեռների դողդողոցը։

—Բարբել, ասաց նա, ինչո՞ւ մեզ հետ եկեղեցի չեկար։

Բարբելը լուռ էր։

—Այդպիսի բան ոչ մի անգամ չի պատահել, շարունակեց պառաւը։ Ամեն կարգին աղջիկ, այսպիսի օրին, իր պատկով եկեղեցի է գնում։ Ինչո՞ւ ես լռել։ Կացիր, ես ցոյց կ՚տամ քեզ այդպէս կամակորել. և չ՚գիտենք էլ թէ ինչի համար։

—Ես ոչ մի անգամ չեմ յամառուել, մայր։

—Չես յամառուել։ Ուրեմն բանը ինչումն է։ Բոլոր ժամանակ ոչ ոքի հետ չես խօսում և այնպէս ես մտն գալիս, կարծես դժբաղդ լինես։ Ի՞նչ է պատահել։ Ի՞նչդ է պակաս։ Ո՞վ է վիրաւորել քեզ։ Տանել չեմ կարողանում, երբ մարդիկ ուռչում են։

—Բայց ես չեմ ուզում, ասաց Բարբելը։

—Արդէն խօսում են քեզ վրայ։ Ուղղակի ականից խորշում էի, որովհետև ականեքեան էլ հարցնում էին «Մրտեղ է Բարբելը, ինչու այսօր չէ երևում»։ Ես հնարում էի թէ ատամներդ ցաւում են։ Զէ՞ որ կ'բամբասէին, եթէ համոզուած չլինէին, որ աղնիւ աղջիկ ես։

Բարբելը շուռ եկաւ, որ քաթանը պահարան դնի։

Մայրը մի քանի քայլ այլ արեց նրա ետևից և ասաց.

—Բարբել, ինձ նայիր, նայիր իմ աչքերին։

Այստեղ աղջիկը անհասկանալի քայլերով դուրս գնաց խրճիթից։

Իսկ պառաւը կարծես մեխուեց գետնին, նա կանգնած էր անշարժ և նայում էր դէպի նախասենեակ, որտեղ անյայտացաւ աղջիկը։ Ոչ մի բառ չարտասանեց նա. միայն ձեռները բարձրացրեց և ծալեց կարծես աղօթելիս լինէր...

Ճաշելու չեկան ոչ Բարբելը և ոչ Ռոխերը։ Ոչ ոք չ'հարցրեց թէ որտեղ էին։ Մնացորդներս լուռ նստած էինք և չէինք կարողանում ուտել։ Առանց նաշը վերջացնելու մէկս միւսի ետևից դուրս եկինք դդալները, վեր կացանք ու բաժանուեցինք իրարից։ Վերջապէս մնացի մենակ և սկսեցի մտածել դալիք դէպքերի մասին։

Երեկ առաւօտ երբ տաւարը ջրհոր էի տանում, յանկարծ տան մօտից մի վայրենի աղաղակ լսեցի և տեսայ ինչպէս Ռոխերը կացինը ձեռին կեռասիների մօտով վազում էր ում որ հետապնդելով։ Իսկ տան առաջ կանգնած էր մի խրտուիլակ, որը կարծես բանջարանոցից եկած լինէր։ Նրա ձեռները տարածուած չէին, այլ դարսած ունէր կրծքին և նրանցից պարանով կապած էր մի յարդէ տիկնիկ...

Այդ հրէշը կանգնած էր նրա պատուհանի առաջ։

Ցուսով էի, որ բացի ինձանից և Ռոխերլից ոչ ոք չտեսաւ այդ։ Վերցրի տիկնիկը, տարայ ախոռը և հաղար կտոր արի։ Ամբողջ օրը կասկածում էի, չնկատեցի՞ն արդեօք ծերունիները, կամ հէնց ինքը, այդ խայտառակ անարգութիւնը. բայց ոչինչ չէին տեսել։ Ռոխերլին էլ ոչինչ չասի և նա ամբողջ օրը վրդովուած էր։

Սակայն ես պատրաստ եմ ոպանել այն մարդուն, որը այս ընտանիքին այսպիսի անօրինակ անպատուութիւն հասցրեց։

Թարգմ. ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆ

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ՀԱՐՏՄԱՆ-ՌՈՒԶԱՄԻ. ԻՐԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԾԻԱԾ ԹԻԱ-
ԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ. Դ. ՏԱՐՈՒԱՅ
ԴԱՍԸՆԹԱՑՔ. ՓՈԽԱԴՐԵՑ Յ. ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆ
ԹԻՖԼԻՍ 1909.

Ուրախ էի, նկատելով, որ ռուսահայերիս մէջ դպրոցական ցանկի ճիւղաւորելու հետ առանձին եռանդով ամէն կողմից լոյս են ընծայում և դիտութեան զանազան ճիւղերի վերաբերեալ դասագրքեր, քանի որ առանց դրանց դժուարին էր մանուկներին աւանդել այս կամ այն դիտութիւնը: Եւ առաւել ուրախութիւն էի զգում, երբ միևնոյն առարկայի համար մի քանի դասագիրք էի տեսնում հրապարակի վրայ. այդ նշանակում էր, որ մրցում կայ մէջ տեղ, իսկ ուր մրցում կայ՝ այնտեղ նաև յառաջադիմութիւն:

Թուաբանութեան տարրական դասագրքերից ինձ ծանօթ էին Գրուբէի դասագիրքը, Եւտուշևսկու խնդիրների հայ թարգմանութիւնը, Հէնչէլի հայերէնը, Սպարապետեանի թուաբանական դասագրքերի շարքը և այլն, իսկ երբ լոյս տեսաւ Յ. Տէր-Միրաքեանի թուաբանութեան նոր դասագիրքը՝ ես շտապեցի փորձել այդ գրքով թուաբանութիւն աւանդել իմ մի աշակերտուհուն, աչքի առաջ ունենալով, որ նախ և առաջ դա, ինչպէս ամենից վերջը հրատարակուածը, զերծ պիտի լինի շատ թերութիւններից և ապա ինչպէս Տէր-Միրաքեանի աշխատութիւն, որը ռուսահայ 2—3 յայտնի մանկավարժներից միոն է համարւում, այդ դասագիրքը յայտնի առաւելութիւններ պիտի ունենայ իւր նախորդներից: Մանաւանդ որ ինքը պ. Տէր-Միրաքեանն էլ իւր յառաջաբանում ասում է, թէ խրախուսուել է

վերջապէս հին ճանապարհից դուրս գալու և նոր ուղի դտնելուն հետամուտ ուսուցիչների հարցասիրութեամբ։

Ձեռք բերի ուրեմն Հարման-Ռուզամիի յօդուածիս ճակատին յիշուած գրքի հայերէն փոխադրութիւնը։

Նախ քան գիրքը աշակերտուհուս ձեռքը տալը, 'ի հարկէ, նախ ինքս պէտք է ծանօթանայի նրա հետ. ծանօթացայ, դասագիրքը ծալեցի մէկ կողմ դրի և նորից դիմեցի հին դասագրքերի օգնութեան, որովհետև գիրքը հիասթափող տպաւորութիւն գործեց ինձ վրայ։

Կկամենայի իմ ստացած տպաւորութիւնների վրայ հրաւիրել ընթերցողի ուշադրութիւնը, յուսալով, որ իմ նկատողութիւնները օգտակար կարող են լինել նաև իրան՝ մանկավարժ Տէր-Միրաքեանին հետագայ իւր աշխատութիւնների համար։

Փոխադրողը գրքի ճակատին գրել է հեղինակի անունը Հարտման Ռուզամի. մինչդեռ իւր յառաջաբանում բացատրում է, որ բացի այդ հեղինակից՝ հում նիւթեր է հաւաքել դրա համար մի շարք ուրիշ հրատարակութիւններից, և դարձեալ օգտուել է Տանկի Eine Sammlung unt. g. Uebungsaufgaben դասագրքից, Արժենեկովի և Վիշնեվսկու ժողովածուներից, ևն ևն, և վերջապէս խառը խնդիրների հատուածը կազմել է Գէորգ Ղազարեանը։ Այս ամենից յետոյ վերկենալ և գրքի ճակատը զարդարել մի հեղինակի անունով՝ որ դուցէ միայն իպէան է տուել գործին և հազիւ խնդիրների մի մասը՝ այդ վարմունքը մատեմատիքական չէ։

Այս հանգամանքը ամենից առաջ բերինք մենք ցոյց տալու համար, որ գիրքը ինչ նշանութեամբ որ սկսուած է, նոյն ձևով էլ շարունակւում ու վախճան է ստանում։

Ամենից առաջ գիրքը որ բացինք՝ 6-դ ֆօրման գլխի վայր դտանք մէջը, որ դժուարացնում էր գրքի գործածութիւնը։

Նախ մենք կարծեցինք, որ գիրքը միայն անխնամ թղթակազմուած է և ուրիշ ոչինչ, և սկսեցինք թերթել ու ուսումնասիրել. և ահա մեր առաջ հանդիսացաւ երկրորդ և ամենից էական խոչընդոտը՝ այդ գրքի անտանելի լեզուն, որ շատ անգամ անհնարին էր դարձնում խնդիրների հասկանալը։ Եթէ

ուզենանք հատուածներ բերել իբրև լեզուի խրթնութեան ապացոյց՝ գուցէ հարկ լինէր արծակ գրուածքների մեծ մասը արտագրել այստեղ. բայց ընթերցողների լսելիքը խնայելով՝ մենք առաջ կբերենք մի շարք օրինակներ, որոնք լիովին գաղափար կտան այդ գրքի լեզուի մասին.—

Եր. 49. Տիգրանի նոր զգեստը 27 ր. 60 կ. արժէ։ Այս փողի 3/4-ը միայն կտորի գինն էր. ուրեմն ո՞րքան։

Ի՞նչ կնշանակի ուրեմն ո՞րքան։

Եր. 49. ուրիշ չափով նաւթ պատրաստուած էր 4 լտմպ 72 ժամ վառելու համար։ Բայց, հթէ 50 ժամից յետոյ միայն մի լամպը վառ մնաց, մնացած նաւթը սրա համար քանի՞ ժամ կը դիմանար։

Ի՞նչ է ուզում ասել փոխապրողը։

Եր. 61. մի աղջիկ 33/4 ժամում 126 9/16 գրօս կոճակ համարեց, իւրաքանչիւր բոպէյում միջին թւով ո՞րքան էր այս։

Ի՞նչն էր որքան։

104. Այս նահանգներից ամեն մէկում իւրաքանչիւր չափահաս տղամարդու միջակ թւով ո՞րքան հող է ընկնում։

Երևի ուզում է ասել՝ միջին թուով։

114. Ո՞րքան կարող են աղալ 3 նոյնպիսի ջրաղացը 52 օրում։

118. Ո՞րք անարժէ մի արշին մահուդը։

119. Գէորգեան ճեմարանի աշակերտների համար տարեայ սկզբին դնեցին...

123. Բաֆֆին ծնուել է 1835 թ. և մեռաւ 53 տարեկան հասակում։

Նոյն. աղա Մահմէդ խանը աւերելէր Թիֆլիսը։

Պ. Տէր-Միրաքեանի գրքում հանդուցեալ կաթողիկոսը անուանակոչուել է Խրիմեան, իսկ այժմեան վեհ. Հայրապետը Իղմիրլեան։

125. Աւազանի երկարութիւնն է 6 սաժ. 5 որաչափ...

5. Քաղաքային պարտէզի երկայնութիւնը 126 ս. է, լայնութիւնը՝ 96 ս. ո՞րքան է այս պարտէզի շրջագիծը։

Կարելի՞ է այս խնդիրը լուծել, երբ սխալ արտայայտութեամբ աշակերտը չգիտէ թէ ինչ դիրք ունի պարտէզը՝ քառակուսի, թէ ոլոր-մոլոր։

Եր. 6. 1908 թ. Զատիկը ապրիլի 13-ին էր։ Համբարձման տօնը ԵՐԲ եղած կլինէր (միտդ պահիր, Համբարձումը Զատկից 40 օր յետոյ է լինում)։

Անճիշտ խնդիր. ԵԹԷ պ. Տէր-Միրաքեանի հաշուով սանք խնդիրը լուծէ, պէտք է ապրիլի 13-ի վրայ 40 օր աւելացնէ Համբարձումը մայիսի 23-ին հասարէ, մինչդեռ Համբարձումը Զատկի օրից հաշուելով քառասներորդ օրն է, ուրեմն մայիսի 22-ին։

Եւն. ևն.

Անճիշտ կամ սխալ գործածուած բառեր, կամայ թէ ակամայ անթիւ խայտառակ սխալներ միանգամայն անընթեռնլի են դարձնում դասագիրքը.—օերմաչափ (ջերմաչափ), միմչև (մինչև), գնեցին (գնեցին), պատրաստ կ (պատրաստ է), Թիֆլի (Թիֆլիսի), ջրանքից (ջրանցքից?), աղցած (աղած?), 2 անդամ է ծօճում (ճօճում ?), վայրեկեան (վայրկեան), ևն.ևն։

Ճամպայ և ճանապարհ,

Մարդաբնակութիւն և աղդաբնակութիւն ևն։

Միևնոյն դասագրքի մէջ Ներսիսեան դպրոցը հիմնուում է 1825 թուին (եր. 123), և բացուում է 1854 (?) նոյեմբերի 21-ին. գոնէ այսքանը պարոնը ճիշտ պիտի գիտենար, իբրև Ներսիսեան դպրոցի ուսուցիչ։

Ցեռոյ փոխադրողը մի վատ սովորութիւն ունի, որ խընդիրները կապում է մէկը միւսի հետ, այնպէս որ մի շարք խընդիրներ ԵԹԷ սկզբից կարդաք հասկանալի են, իսկ ԵԹԷ ամեն մէկ պարագրաֆը, առանձին խնդիր լինելով, առանձին էլ վերլուծէք՝ նրանք այն ժամանակ ներկայանում են որպէս մի մի կուրիոզ (եր. 62 ևն)։

Թողնում ենք մանր մունր սխալները և մանաւանդ թուանշանների անհամար սխալները։ Մի հետաքրքրական նորութիւն էլ ենք իմանում այս դասագրքից, որ հանգ. Խրիմեան Հայրիկը դեռ ևս բազմած է Լուսաւորչի գահի վրայ և միայն 1911 թուի մարտի 23-ին է պատրաստուում հրաժեշտ տալ այս աշխարհին։ (տես եր. 123 § 393. երբ վախճանուեց Խրիմեան Հայրիկը, ԵԹԷ նա 17 տարի 5 ամիս և 25 օր կաթողիկոսութիւն արաւ, իսկ նա օծուեց 1893 սեպտեմբեր 26-ին+17 տա-

քի 5 ամիս և 25 օր=մահը ուրեմն պիտի լինի 1911 մարտ 23-ին)։

Պ. Տէր-Միրաքեանը դուցէ մեզ կասէ, թէ նա թուաբանութեան դասագիրք է կազմել և ոչ պատմութեան. բայց մի՞թէ մի դիտութիւն աւանդելով՝ ներելի է միւսները աղճատել. և մի՞թէ գիտութիւնները միմեանց պակասը չպիտի լրացնեն։

Մենք կցանկայինք, որ յայտնի մանկավարժ պ. Տէր-Միրաքեանը մի փոքր աւելի բարեխիղճ վերաբերուէր հետևեալ դասագրքերը կազմելիս։

ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆ

ԼՈՒՐԵՐ

Տաճկահայոց գործերը աւելի քան տարտամ վիճակի մէջ են. «Լուսայ»ի ընթերցողները գիտեն, որ պատրիարք Դուրեան սրբազանը հրաժարուել է իւր պաշտօնից, ժողովրդի մի մասը դոհ նորա բռնած դիրքից՝ ուղերձներ է ուղարկում պատրիարքին, Եւրոպական մամուլի մի մասը ջատագովում է նրա բռնած դիրքը, միւս կողմից ազգի մի մասը դժգոհ է, որ պատրիարքը պաշտօնապէս հրաժարուած է, թէպէտ մասնաւոր կերպով դարձեալ վարում է պաշտօնի անյետաձգելի պարտաւորութիւնները, բայց և այնպէս այդ ձևով նորա յամառումը մի առանձին բարեփոխութիւն առաջ չբերեց Տաճկահայոց գործերի մէջ, բացի այն՝ որ կուսակցութիւնները աւելի լարուեցին, կառավարութիւնը մաս մատի չդրեց Դուրեանի հրաժարման առիթ եղող Ադանայի և ընդհանրապէս Տաճկահայերի տնտեսական վիճակը բարւոքելու։ Բոլոր օգուտը այդ հրաժարականի այն եղաւ, որ մի անգամ էլ Եւրոպայի ուշադրութիւնը դարձաւ Տաճկաստանի դժբաղդ հայերի ու նոցա ա-

մայացած հայրենիքի վերայ, որպէս զի մի անդամ էլ խորին մոռացութեան մատնուին նոքա և գուցէ իբրև վրէժ՝ նորանոր արհաւիրքներ նիւթուեն հայութեան դեռ կանգուն մնացող հատուածների համար...

Որքան էլ մենք կամենանք խուլ և կոյր ձևանալ, բայց իրողութիւնն այն է, որ վերջին մի քանի տասնեակ տարիներում հայերը այս և այն տերութեան մէջ մեր աչքի առաջ պարբերաբար կոտորուում են, հայերի թիւը պարբերաբար պակասում է, Հայաստանը սիստեմատիք կերպով դատարկուում է և ամայանում. չէ կարելի չնկատել այս խիստ կարևոր հանդամանքը և չմտածել սորա վերայ։—Սպասել, որ թիւրքահայոց նշանաւոր ազգային ժողովը կմտածէ առաջն առնել այն բնաջնջումին, որին ենթակայ է նորա խնամքին յանձնուած թշուառ հայ ժողովուրդը, այդ մտացածին երազ է. էջմիածնի ձայնը անզօր է այդ խնդիրներում, իսկ յեղափոխական կոմիտէների նշանակութիւնը ընկել է ժողովրդի մէջ։ Զկայ մի մարմին, որի ձայնը նշանակութիւն ունենայ իշխողների համար։

Մենք կարծում ենք, որ նպատակայարմար կլինէր մի հայկական համագումար կազմակերպել ամեն երկրների հայերից և ազգովին որոշել այն քաղաքական դիրքը, որին հայերը պարտաւոր լինեն հետևել հայ ազգի թշուառ մնացորդների դոյութիւնը ապահովելու պարբերական կոտորածներից ու հալածանքից, իսկ Հայաստանը ամայանալուց։

Ղազանի համալսարանի իրաւաբանական բաժնի ուսանող Մովսէս Շանիձէ «ռուսաց ցենզուրի պատմութիւնը» աշխատութեան համար համալսարանի խորհրդից պարգևատրուել է ոսկէ մեդալով։ Ցանկալի կլինէր մի օր էլ տեսնել հրատարակուած կովկասեան ցենզուրայի պատմութիւնը և յատկապէս հայ ցենզօրների պատմութիւնը, քաղուած պաշտօնական աղբիւրներից և տակաւին կենդանի հայ հեղինակների յիշողութիւնների վրայ հիմնուած։ Կարծում ենք, որ այդ պատմութիւնը մեծ լոյս պիտի սփռէ ընդհանրապէս ռուսահայոց գրականութեան զարգացման և մասնաւորապէս մեր կուսակցութիւնների

կազմակերպութեան ու զարգացման վերայ և մանաւանդ հայ մամուլի պատմութեան վերայ։

Ամենայն Հայոց վեհ. կաթողիկոսի շրջաբերական կոնդակի հիման վերայ թեմիս ս. Առաջնորդը մանրամասն տեղեկութիւններ է պահանջել բոլոր պետական և քաղաքային դպրոցների հայ կրօնուսոյցներից կրօնի դասաւանդութեան վերաբերեալ զանազան խնդիրների մասին։

Նոյեմբերի 21-ին կայս. գիւղատնտեսական ընկերութեան նախաձեռնութեամբ Թիֆլիզում կատարուելու է պ. Քալանթարի երեսնամեայ գիւղատնտեսական գործունէութեան յօբելեանը։

Փոխանորդ Կորիւն վարդապետի աքսորից յետոյ Գանձակը վերջին տարիներս ճնացել էր առանց առաջնորդական փոխանորդի. այժմ «Մշակ»-ը հաղորդում է, որ այս օրերս այնտեղ կատարուել է ժողովրդական ընտրութիւն և փոխանորդի պաշտօնի համար ձայների առաւելութեամբ ընտրուել է Գարեգին վ. Յովսէփեանը։

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիզում մի քանի հոգի պատրաստութիւններ են տեսնում մի ուրիշ հայերէն ամսաթերթ հրատարակելու և իբր թէ այս հրատարակութեան համար խոստացուած է նոցա մի բարեգործի կողմից մի յայտնի գումար։

Խմբագիր Հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆՑ



ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է

ԵՂԻՇԷԻ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Աշխատութեամբ

ԳԻՒՏ ա. ք. ԱՂԱՆԵԱՆԻ

Բացուած է 1910 թ. բաժանորդագրութիւնը

(ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

ՀԱՄԿԵՐ

մանկական պատկերազարդ ամսագրի

Ամսագիրը լոյս է տեսնում Թիֆլիսում 32—48 երեսանոց մեծադիր գրքոյկներով նախկին ընդարձակ ծրագրով Մշտական աշխատակցութեամբ ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ԵՒ ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ

Ամսագիրը ունի նաև ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, ուր շօշափւում են ընտանեկան կրթութեան վերաբերեալ կարևորագոյն հարցեր։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍՈՎ

Տարեկան ՀԱՄԿԵՐ, մանկ. բաժին	3 ռ.	մանկավարժ. բաժ.	4 ռ.
Կէս տարուանը . .	1 ռ. 80 կ.	.	2 ռ. 10 կ.
Մէկ ամսուանը . .	— 30 կ.	.	— 35 կ.
Պարսկաստանում . .	3 ռ. 50 կ.	.	4 ռ. 50 կ.
Արտասահմանում տարեկան	ԻՆՐ ֆր.		ՏԱՍՆԵՐԿՈՒ ֆ կ.
Հրատարակութեան սկզբից մինչև 1909 թ. վերջը	11 ռ.		15 ռ.

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1910 ԹՈՒԻ

(ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ 15-Դ ՏԱՐԻ)

ԼՈՒՄԱՅ

ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ

1910 թուին Լումայ լոյս կը տեսնի իւր այժմեան դիրքով, բաղկացած 64—80 երեսներից, մեր մշտական աշխատակիցների գործակցութեամբ։ Ինչպէս միշտ, հարկաւոր դէպքերում, կտրուեն պատկերներ հասարակական երևոյթների առթիւ։

ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Նիւթերը պիտի գրուած լինին պարզ, մի էջի վրայ և ոչ աւելի քան 32 տպ. երես։
2. Արտատպութիւն ոչ մի դէպքում չի տրուում։
3. Նիւթերը չեն վերադարձնուում. յետ ստանալ ցանկացողները պիտի ուղարկեն փոստի ծախք։
4. Զտպուող նիւթերի մասին ծանուցում է տրուում ամսագրի մէջ պատասխանների բաժնում։
5. Թարգմանական նիւթեր ընդունուում են շատ կարճ և ընտիր հեղինակների։

ԲԱԺՆԷԳԻՆՆ Է տարեկան 6 ռ., կէս տ. 4 ռ.,
Արտասահման „ 8 „ „ 5 „

ՈՒՈՒՑԻՉՆԵՐԻ, ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ, ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԵՒ ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԼՈՒՄԱՅ»-Ի ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԷԳԻՆՆ Է 4 ՌՈՒԲԼԻ

ԱՊԱՌԻԿ ՈՉ ՈՔԻ ՉԻ ՈՒՂԱՐԿՈՒԻ

Հասցէն Թիֆլիս Պոլիցէյսկայա 7. Tiflis Polizeiskaja, 7.